



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

417

Վճարող. Բանտրական Հայ Գաղմակերպումին:
Վրէժարներ բոլոր երկրներէ միացեմ!

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ ԵՒ ՓՐԻՂՐԻՄ ԷՆԳԷԼՍ

Մ Ա Ն Ի Ֆ Է Ս Տ

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



Թարգման. զերման. Մ. Մ.

Հրատարակութիւն Կենտրոնական Կովիտի:

1906

Սեփական տպարան:

3K13

Մ-28

Ի-13

2005

Սօց.-Դեմոկ. Բանւորական Հայ Կազմակերպութիւն:

Պօզիւսարներ բոլոր երկրների միացե՛ք!
NOV 2000

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ ԵՒ ՓՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

Մ Ա Ն Ի Ց Է Ս Տ

ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ



Թարգման. զերման. Մ. Մ.

Հրատարակութիւն Կենտրոնական Կոմիտէի:


1 9 0 6

Սեփական տպարան:

26 JUN 2013

417

„Manifest des kommunistischen Partei“ von
Karl Marx und Friedrich Engels.



723 - 98

ԱՌԱՋԱՐԱՆ 1872 թ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

„Կոմունիստների Գաշնակցութիւնը“ — մի մի-
ջագգային բանւորական կազմակերպութիւն, որը
այն ժամանակէլ պայմանների մէջ բնականաբար
կարող էր միայն գաղտնի լինել — 1847 թւականի
նոյեմբերին Լոնդոնում գումարած կօնգրէսում
յանձնարարել է ներքոյ ստորագրեալներին՝ կազ-
մել հրատարակելու համար կուսակցութեան մասն-
րամասն տեսական և գործնական ծրագիրը: Այդ-
պիսով ծնունդ առաւ հետեւեալ Մանիֆէստը, որի
ձեւագիրը փետրւարեան լեղափոխութիւնից մի քա-
նի շաբաթ առաջ ուղարկւած էր Լոնդոն տպա-
գրելու համար: Սկզբում գերմաներէն հրատարա-
կելով, Մանիֆէստն ունեցել է այդ լեզուով Գեր-
մանիայում, Անգլիայում և Ամերիկայում առնւազն
տասներկու տարբեր տպագրութիւններ: Այդ յիշ-
բէն նա առաջին անգամ լոյս տեսաւ 1850 թ.
Լոնդոնում, Red Republican-ի մէջ, միտա Հէյլէն
Մակֆէրլէնի թարգմանութեամբ, և 1871 թ. Ա-
մերիկայում, առնւազն երեք տարբեր թարգմա-
նութիւններով: Ֆրանսերէն լոյս տեսաւ առաջին
անգամ Փարիզում, 1848 թ. յունիսեան ապստամ-
բութիւնից քիչ առաջ, փերջերումս էլ Նիւ-Իօրկի
Le Socialiste-ի մէջ: Այժմ պատրաստուած է մի
նոր թարգմանութիւն: Լեհերէն տպագրել է Լոն-
դոնում, առաջին գերմաներէն հրատարակութի-

նից անմիջապէս լետոյ: Ռուսերէն—ժընեում, վաթսուևական թւականներին: Դանիերէն թարգմանել է նոյնպէս իսկոյն իր լոյս տեսնելուց լետոյ:

Արշափ էլ հասարակական յարաբերութիւնները փոխւած լինեն վերջին 25 տարիներում, այնուամենայնիւ այս Մանիֆեստի մէջ արտայայտած ընդհանուր սկզբունքները ամբողջութեամբ վերցրած, պահպանել են մինչև օրս իրենց լիակատար ճշտութիւնը: Հարկաւոր է միայն ուղղել մի քանի մասնաւոր կէտեր:

Այդ սկզբունքների գործնական կիրառումը, ինչպէս Մանիֆեստն ինքը յայտարարում է, ամենուրէք և ամեն ժամանակ կախւած պիտի լինի պատմականօրէն տրւած հանգամանքներից, հետեւապէս և չպիտի առանձին նշանակութիւն տալ երկրորդ գլխի վերջում առաջարկւած լեղափոխական միջոցներին: Այդ մասը ներկայումս շատ կէտերում պետք է փոփոխել: Ինկատի առնելով խոշոր արգիւնաբերութեան հսկայական զարգացումը վերջին 25 տարւայ ընթացքում և նրա հետ զուգընթացաբար առաջադիմող բանւոր դասակարգի կուսակցական կազմակերպութիւնը, ինկատի առնելով գործնական փորձառութիւնը՝ նախ փետրւարեան լեղափոխութեան, ապա աւելի ևս Փարիզի կոմունայի ժամանակ, երբ պրօլետարիատը առաջին անգամ երկու ամիս շարունակ իր ձեռքն էր առել քաղաքական իշխանութիւնը, — պետք է ասել, որ վերոյիշեալ գործնական ծրագիրը տեղտեղ արդէն հնացել է: Փարիզի կոմունան ապացուցեց, որ իբանւոր դասակարգը չի կարող իր ձեռքն առնել պատրաստի պետական մեքենան և

գործագրել նրան յօգուտ իր սեփական շահերի՝ (տես «Քաղաքացիական պատերազմ Ֆրանսիայում»), Միջազգային բանւորական Դաշնակցութեան Ընդհանուր խորհրդի ղեմումը, գերմ. տպագրութիւն, երես 19, ուր այդ մասին մանրամասն խօսուում է): Յետոյ ինքնատիւքեան հասկանալի է, որ սօցիալիստական գրականութեան քննադատութիւնը ներկայիս համար թերի է, որովհետև հասնում է միայն մինչև 1847 թիւը: Նոյնպէս և նկատուութիւնները կոմունիստների վերաբերմունքի մասին գէպի զանազան ղեմագրական կուսակցութիւնները (գլուխ IV), թէպէտև ներկայումս ընդհանուր գծերով ճիշտ են, բայց և այնպէս իրենց մանրամասնութիւնների մէջ հնացած են, այն պատճառով արդէն, որ քաղաքական գրութիւնը բոլորովին փոխել է և պատմական զարգացումն անհետացրել է հասարակական ասպարիզից յիշւած կուսակցութիւնների մեծ մասը:

Սակայն Մանիֆեստը մի պատմական դօկումենտ է, որը փոփոխել մենք մեր իրաւունքը չենք համարում: Թերևս հետեւեալ հրատարակութեանը կցւի մի ներածութիւն, որը կընդգրկէ 1847 թւականից մինչև մեր օրերը հասնող ժամանակամիջոցը: Ներկայ արտատպութիւնը կատարւեց մեզ համար բոլորովին անսպասելի կերպով, այնպէս որ մենք ժամանակ չունեցանք այդ անելու:

Լոնդոն, 24 յունիսի 1872.

Կարլ Մարքս: Փրիդրիխ Էնգելս:

կարող այլ ևս ազատել շահագործող և ճնշող դասակարգից (բուրժուազիայից), առանց ազատելու միաժամանակ և ընդմիշտ ամբողջ հասարակութիւնը շահագործութիւնից, ճնշումից և դասակարգային կռիւներից.—այդ հիմնական միաքը պատկանում է միայն և բացառապէս Մարքսին:¹⁾

Ես շատ անգամ արդէն ասել եմ այդ բայց այժմ առանձնապէս հարկաւոր է յիշել այդ մասին Մանիֆէստի առաջաբանում:

Փրիդրիխ Էնգելս:

Հունիս, 28 լունիսի 1883.

¹⁾ «Այդ մտքին,—ասում եմ ես անգլիերէն թարգմանութեան առաջաբանում,—որը իմ կարծիքով կոչւած է հիմք դառնալու պատմական գիտութեան նոյն տեսակ առաջադիմութեան համար, ինչ տեսակ Դարվինի Թէորիան եղել է բնագիտութեան վերաբերմամբ, այդ մտքին մենք երկուսս էլ օնտոգրֆտէ մտակցել էինք 1845 թականից դեռ մի քանի տարի առաջ: Թէ որ աստիճան եմ ես ինքնուրոյնաբար առաջ ընթացել այդ ուղղութեամբ, այդ ցոյց է տալիս իմ «Բանտը դասակարգի դրութիւնը Անգլիայում» աշխատութիւնը: Իսկ երբ 1845 թ. զարնանը ես հանդիպեցի Մարքսին Բրիւսելում, նա արդէն վերջնականապէս մշակել էր այդ միտքը և ներկայացրեց ինձ համարեալ նոյն պարզ խօսքերով, որոնցով ես այդ վերև արտայայտեցի»:

ԱՌԱՋԱԲԱՆ, 1883 թ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Ներկայ հրատարակութեան առաջաբանը, աւանդ, ես պէտքէ միայնակ ստորագրեմ: Մարքսը —այն մարդը, որին Եւրոպայի և Ամերիկայի համայն բանւոր դասակարգը աւելի է պարտական, քան թէ որեւէ մի ուրիշին—Մարքսը յանգչում է այժմ Խայգետի գերեզմանոցում, և նրա շիրիմի վրայ բուսել է արդէն առաջին խոտը: Նրա մահից յետոյ Մանիֆէստի մշակման կամ լրացման մասին խօսք անգամ չի կարող լինել այլևս: Բայց հէնց այդ պատճառով ես աւելի ևս կարևոր եմ գտնում նորից վճռականապէս յայտնել այստեղ հետևեալը:

Մանիֆէստի հիմնական միաքը՝ որ տնտեսական արդիւնագործութիւնը և նրանից անհրաժեշտօրէն բղխող բաժանումը հասարակութեան մէջ մի որեւէ պատմական դարեշրջանում կազմում են այդ դարեշրջանի քաղաքական և մտաւորական պատմութեան հիմքը. որ հետևապէս ամբողջ պատմութիւնը (նախնական համայնական հողատիրութեան քայքայումից յետոյ) դասակարգային կռիւների պատմութիւն է եղել՝ շահագործողների և շահագործողների, ենթարկւած և տիրող դասակարգերի միջև, հասարակական զարգացման զանազան շրջաններում. որ այդ կռիւը ներկայումս արդէն հասել է մի աստիճանի, երբ շահագործող և ճնշւած դասակարգը (պրօլետարիատը) չի

ԱՌԱՋԱԲԱՆ 1890 Թ. ԳԵՐՄԱՆԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԵԱՆ

Նախորդ տողերը գրելուց յետոյ, կրկին անհրաժեշտ դարձաւ Մանիֆէստի մի նոր գերմաներէն տպագրութիւն. միևնոյն ժամանակ տեղի ունեցան Մանիֆէստի հետ կապ ունեցող մի քանի անցքեր, որոնց հարկաւոր է այստեղ յիշատակել:

1882 թ. ժընևուս լոյս տեսաւ Վէրա Չասուլիչի ²⁾ ձեռքով կատարած երկրորդ ուսերէն թարգմանութիւնը, որի առաջաբանը գրել էինք Մարքոսը և ես: Ահաւասիկ նա:

„Վոմունիստական կուսակցութեան Մանիֆէստի առաջին ուսերէն հրատարակութիւնը լոյս է տեսել Բահուսիսի թարգմանութեամբ վաթսուական թւականների սկզբներում, „Վոլոկոլ“-ի տպարանում: Այն ժամանակ այդ գրւածքի ուսերէն հրատարակութիւնը Արևմուտքում ունէր միայն գրականական կուրիօզի նշանակութիւն: Այդպիսի մի հայեացք այսօր այլևս անկարելի է դարձել: Թէ որքան սոհմանտիակ է եղել պրօլետարական շարժման ծաւալը Մանիֆէստի առաջին հրատարակութեան շրջանում (դեկտեմբեր 1847 թ.), այդ պարզ երևում է նրա վերջին գլխից՝ „Վոմունիստների վերաբերմունքը դէպի գանազան դիմա-

²⁾ Էնգէլսը սխալում է. այդ ուսերէն թարգմանութիւնը պատկանում է Գիօրգի Պլեխանօվին: Մ. Մ.

դրական կուսակցութիւնները“: Այդտեղ բացակայ են ամենից առաջ Ռուսաստանը և Միացեալ Նահանգները: Գա այն ժամանակն էր, երբ Ռուսաստանը ներկայացնում էր եւրոպական ռէակցիայի վերջին հզօր պահեստը և երբ զաղթականութիւնը դէպի Միացեալ Նահանգները կլանում էր եւրոպական պրօլետարիատի աւելորդ ուժերը: Այդ երկու երկրները մատակարարում էին առատօրէն հում նիւթեր Եւրոպային և միևնոյն ժամանակ ծառայում էին իբրև վաճառանոց, ուր արտահանում էին եւրոպական արգիւնաբերութեան արգիւնքները: Հետևաբար, այսպէս թէ այնպէս նըրանք երկուսն էլ պատւար էին Եւրոպայի հասարակական կազմի համար:

„Որքան փոխել են այսօր այդ բոլորը: Հէնց այդ եւրոպական գաղթականութիւնը նպաստեց Հիւսիսային Ամերիկայի երկրագործութեան զարգացման, որն իր մրցութեամբ ցնցում է եւրոպայի թէ խոշոր և թէ մանր հողային սեփականութեան հիմքերը: Միևնոյն ժամանակ նա հնարաւորութիւն տւեց Միացեալ Նահանգներին շահագործելու սեփական հարուստ արգիւնաբերական աղբիւրները այնպիսի չափերով և այնպիսի եռանդով, որ կարճ ժամանակամիջոցում դա պէտքէ վերջ դնէ Արևմտեան եւրոպայի արգիւնաբերական մենաշնորհին: Եւ այդ երկու հանգամանքներն Ամերիկայի վրայ ևս ազդում են յեղափոխիչ կերպով: Ինքնուրոյն ֆէրմերների մանր և միջակ հողային սեփականութիւնը—Ամերիկայի ամբողջ քաղաքական կազմի այդ հիմքը—աւելի ու աւելի է լողթայարւում հսկայ ֆէրմաների մրցութեամբ, մինչդեռ միաժամանակ արգիւնաբերական շրջաններ-

րում, կապիտալի առասպելական կենտրոնացման հետ, զարգանում է առաջին անգամ մի բազմաթիւ պրօլետարիատ:

„Անցնենք Ռուսաստանին: 1848—49 թւականների լեղափոխութեան շրջանում ոչ միայն եւրօպական միապետները, այլ և եւրօպական բուրժուաները իրենց միակ փրկութիւնը նոր ուժ առնող պրօլետարիատից տեսնում էին ռուսական միջամտութեան մէջ: Յարը յայտարարեց եւրօպական ռէակցիայի պարագլուխ: Այսօր նա բանտարկւած է Գառչինայում, որպէս լեղափոխութեան գերի, և Ռուսաստանը ներկայացնում է եւրօպայի լեղափոխական շարժման առաջագունդը:“

„Կօմունիստական Մանիֆէստի նպատակն էր՝ յայտարարել ժամանակակից բուրժուական սեփականութեան վերահաս ճակատագրական անկումը: Բայց Ռուսաստանում, տենդային արագութեամբ զարգանող կապիտալիստական կարգերի և միայն ներկայումս գոյացող բուրժուական հողային սեփականութեան հետ միասին, մենք գտնում ենք հողերի մեծ կէսը գիւղացիների ձեռքում, որպէս համայնական սեփականութիւն:

„Հարց է ծագում. կարող է արդեօք ռուսական համայնքը—նախնական կոլեկտիւ հողային սեփականութեան այդ յոմենայն դէպս շատ քայքայուած ձևը—անմիջապէս փոխել հողային սեփականութեան աւելի բարձր, կօմունիստական ձևի, թէ, ընդհակառակը, նա զեռ պէտքէ անցնէ քայքայման նայն պրօցէսը, որով բնորոշուած է Արևմուտքի պատմական զարգացումը:

„Միակ պատասխանը, որ այսօր կարելի է տալ այդ հարցին, հեռեեայն է:

Եթէ ռուսական լեղափոխութիւնը ազդանշան եղաւ Արևմտեան բանւորական լեղափոխութեան համար, այնպէս որ երկու լեղափոխութիւնները յրացնեն իրար, այն ժամանակ ռուսական ներկայ համայնական հողատիրութիւնը կարող է կօմունիստական զարգացման ելակէտը դառնալ:

Լօնդօն, 21 յունարի 1882.

Միւկնոյն ժամանակ լոյս է տեսել ժըննում մի նոր Լեհական թարգմանութիւն. Manifest Kommunistyczny.

Յետոյ հրատարակել է մի նոր գանիական թարգմանութիւն „Social-demokratisk Bibliothek“-ում, Կօպէնհագէն, 1885: Դժբախտաբար նա լիակատար չէ. մի քանի նշանաւոր տեղեր, որոնք, թւում է, թարգմանչին գժւարութիւններ են պատճառել, բաց են թողնուած, և առհասարակ այստեղ-այնտեղ նշմարուած են շտապման հետքից, որոնք այնքան աւելի անհաճելի են թւում որքան թարգմանութեան միւս մասերից երևում է, որ եթէ մի փոքր աւելի խնամք տարւէր, թարգմանութիւնը կարող էր բաւական լաջող լինել:

1866 թ. Փարիզի Le Socialiste-ի մէջ լոյս տեսաւ մի նոր Ֆրանսերէն թարգմանութիւն մինչև օրս եղած հրատարակութիւնների մէջ դա լաւագոյնն է:

Իրանից լետոյ միւկնոյն տարին լոյս տեսաւ մի սպանիական թարգմանութիւն Մադրիտի „El Socialista“-ի մէջ, որը լետոյ տպագրւեց առանձին գրքովով. „Manifiesto del Partido Comunista por Carlos Marx y F. Engels, Madrid, Administracion de El Socialista, Hernan Cortes 8.“

Ինչպէս կուրիող պէտքէ լիշել, որ 1887 թ. Կ.-Պօլսի մի հրատարակչի առաջարկել են Մանիֆէստի հայերէն թարգմանութեան ձեռագիրը. բարի մարդը քաջութիւն չի ունեցել տպագրելու Մարքսի անունը կրող մի աշխատութիւն և խորհուրդ է տւել թարգմանչին՝ Մարքսի փոխարէն զնել իր անունը: Թարգմանիչը մերժել է այդ առաջարկը:

Անգլիայում մի քանի շատ թէ քիչ սխալ ամերիկական թարգմանութիւններ արտատպելուց յետոյ, 1888 թ. լոյս տեսաւ վերջապէս մի ճիշտ թարգմանութիւն: Թարգմանութիւնը արել է իմ ընկեր Սամէլ Մօօրը և տպագրելուց առաջ՝ նա նորից խմբագրել է մեր երկուսիս կողմից: Նրա վերնագիրն է. Manifesto of the Communist Party, by Karl Marx and Frederick Engels. Autho- rised English Translation. Edited and anno- tated by Frederick Engels. 1888. London, Wil- liam Reeres, 185 Fleetst E. C. Այդ հրատարա- կութեան մէջ արւած նկատողութիւններից մի քա- նիսը մտել են ներկայ հրատարակութեան մէջ:

Մանիֆէստի ունեցել է իր ճակատագիրը: Իր լոյս տեսնելու առաջին օրերում նա ոգևորու- թեամբ ողջոյնեցաւ գիտական սօցիալիզմի այն ժամանակ դեռ փոքրաթիւ առաջագունդի կողմից, ինչպէս այդ մասին վկայում են առաջին առաջա- բանի մէջ լիշատակւած թարգմանութիւնները: Ապա շուտով, 1848 թւականի Փարիզի բանւոր- ների յունիստեան պարտութեան հետ սկսւած ու- ակցիայի շնորհիւ, նա մատնեց մոռացութեան, իսկ յետոյ, Կեօլնի կոմունիստների 1852 թ. նոյ- եմբերի դատապարտութեամբ, նա յայտարարեց

„օրէնքից դուրս“: Երբ փետրւարեան յեղափո- խութիւնից ծագած բանւորական շարժումը բոլո- բովին անհետացաւ հասարակական ասպարիզից, ետ մղեց բեմից նոյնպէս և Մանիֆէստը:

Երբ բանւոր դասակարգը Եւրօպայում դար- ձեալ բաւականաչափ զօրեղացաւ՝ իշխող դասա- կարգերի դէմ նոր գրոհ տալու համար, այն ժա- մանակ ծնունդ առաւ „Միջազգային բանւորական Դաշնակցութիւնը“: Նրա նպատակն է ձուլել Եւ- րօպայի և Ամերիկայի բովանդակ մարտնչող բան- ւոր դասակարգը մի մեծ գիււորական բանակի մէջ: Նրա համար նա չէր կարող իբրև եղակից ընդու- նել Մանիֆէստի մէջ արտայայտած սկզբունքները. նա պէտքէ ունենար այնպիսի մի ծրագիր, որը հնարաւորութիւն տար միանալու թէ անգլիական արէգս-իւնիօններին, թէ Ֆրանսիական, բելգիական իտալական և սպանիական պրուգօնիստներին և թէ գերմանական լասալեաններին:³⁾ Այդ ծրագիրը Ինտերնացիօնալի կանոնադրութեան հիմնական սկզբունքները—կազմւած էր Մարքսի ձեռքով այն- պիսի վարպետութեամբ, որը խոստովանում էին մինչև անգամ Բակունինը և անիշխանականները: Մանիֆէստի մէջ արծարծւած դրութիւնների վերջ- նական յաղթանակը Մարքսը սպասում էր միայն

³⁾ Մեզ հետ յարաբերութիւններ ունենալիս, Լասալն ան- ւանում էր իրեն Մարքսի «աշակերտ» և, որպէս այդպիսին, կան- գնած էր բնականաբար Մանիֆէստի սկզբունքների հողի վրայ: Այլ էին Լասալի այն համախոհները, որոնք նրա պահանջած „պետական կրեդիտով հիմնւելիք արդիւնաբերող ընկերութիւն- ներից“ հետո ջէին գնում և ամրոջք բանւոր դասակարգը բա- ժանում էին երկու մասի. ինքնօգնութեան կողմնակիցների և պետական օգնութեան կողմնակիցների:

և միայն բանւոր դասակարգի մտաւոր զարգացումից, որը պէտքէ անհրաժեշտօրէն կատարւէր շնորհիւ բանւորների միացած գործակցութեան և փոխադարձ շփման: Դէպքելը և կապիտալի դէմ մղուող կուռի փոփոխական փորձերը, պարտութիւնները աւելի քան աջողութիւնները, պէտքէ պարզէին մաքսադրներին նրանց մինչայժմեան համաշխարհային դարձանների անբաւարարութիւնը, պէտքէ ընդունակ դարձնէին նրանց ուղեղները՝ աւելի հիմնաւոր կերպով ըմբռնելու բանւորների ազատագրութեան իսկական պայմանները: Եւ Մարքսն իրաւացի էր: Բանւոր դասակարգը 1874 թւականին, Ինտերնացիօնալի յուժման ժամանակ, բոլորովին այլ էր, քան 1864 թւականին, Ինտերնացիօնալի հիւնադրութեան ժամանակ: Պրուզօնիզմը բոմանական երկրներում և ինքնօրինակ շասայեանիզմը Գերմանիայում արդէն անհետանալու վրայ էին, և մինչև անգամ այն ժամանակուայ անգլիական ծալրահեղ պահպանողական տրէդս-իւնիօնները հասել էին փոքր առ փոքր այնպիսի դուրսութեան, որ 1877 թ. Սվանսիայում կայացած նրանց կօնգրէսի նախագահը կարողացաւ ստել կօնգրէսի անունից. «ցամաքային սօցիալիզմը կորցրել է մեզ համար իր սարսափը»: Բայց ցամաքային սօցիալիզմը 1887 թ. գլեթլ գետ և ս միայն Մանիֆէստի մէջ արտայայտուած թէօրիան էր: Այդպէս Մանիֆէստի պատմութիւնը որոշ չափով արտայայտում է ժամանակակից բանւորական շարժման պատմութիւնը՝ սկսած 1848 թւականից: Այսօր Մանիֆէստը—համայն սօցիալիստական գրականութեան ալգ, անտարակոյս, ամենաշատ տարածուած և ամենամիջազգային արդիւնքը—ներկայացնում

է մի ընդհանուր ծրագիր ամբողջ աշխարհի միլիօնաւոր բանւորների համար, Սիբիրից մինչև Կալիֆօրնիա: Բայց և այնպէս, երբ նա լոյս տեսաւ, մենք չէինք վստահանում նրան սօցիալիստական Մանիֆէստ անւանելու: 1847 թ. սօցիալիստ բառի տակ հասկանում էին երկու տեսակի մարդկանց: Մի կողմից, զանազան ուտօպիական սիստեմների կողմնակիցներին և յոտկապէս անգլիական օվէնիստներին ու ֆրանսիական ֆարիէրիստներին, որոնք երկուսն էլ այն ժամանակ դարձել էին արդէն հասարակ աղանդներ և անհետանալու վրայ էին: Միւս կողմից, ամեն տեսակ սօցիալական զեղազործներ, որոնք իրենց ամենաբոյժ միջոցներով և բազմատեսակ կարկատաններով կամենում էին դարձանել հասարակական թշւառութիւնները՝ առանց դիպչելու ամենեւին կապիտալին և շահին: Երկու դէպքում էլ մարդիկ, որոնք կանգնած էին բանւորական շարժումից դուրս և որոնք նեցուկ էին սրոնում աւելի «կրթուած» դասակարգերի մէջ: Ընդհակառակը, բանւորների այն մասը, որը, համոզուած քաղաքական լեղաշրջումների անբաւարարութեան մէջ, պահանջում էր հասարակական կարգերի արմատական վերանորոգումն, անւանում էր իրեն կօմունիստական: Դա գետ բոլորովին անմշակ, ինստինքտով և փոքր ինչ բիրտ կօմունիզմ էր. բայց նա այնքան ուժեղ էր, որ կարողացաւ արտագրել ուտօպիական կօմունիզմի երկու մեծ սիստեմներ. Ֆրանսիայում Կաբէի «իկարիական» կօմունիզմը, Գերմանիայում Վալտլինգի կօմունիզմը: Սօցիալիզմը 1847 թւականին նշանակում էր բուրժուական շարժում, իսկ կօմունիզմը՝ բանւոր

րական շարժում: Սօցիալիզմը, գոնէ Եւրօպայի ցամաքի վրայ, մուտք ունէր սալօններում, կօմունիզմը՝ ընդհակառակը: Եւ որովհետեւ մենք այն ժամանակ արդէն կատարելապէս համոզուած էինք, որ ,,բանօրների ազատագրութիւնը պէտքէ լինի իրենց բանօրների գործը“, ուստի մի վարկեան անգամ չէինք կարող տատանել, թէ որը ընտրել այդ երկու անուններից: Եւ դրանից յետոյ էլ երբէք մեր մտքով չի անցնիլ հրաժարել այդ անունից:

„Պրօլետարներ բոլոր երկրների միացէք“: Ետ քիչ ձայներ արձագանք տւին մեզ, երբ մենք 42 տարի սրանից առաջ, Փարիզեան լեղափոխութեան նախօրեակին, որի ժամանակ պրօլետարիատը երևան եկաւ ինքնուրոյն պահանջներով, աշխարհ նետեցինք այդ կոչը: Բայց 1864 թւականի սեպտեմբերի 28-ին Արևմտեան Եւրօպայի երկրների մեծամասնութեան պրօլետարները միացան, կազմելով փայլուն լիշատակի „Միջազգային բանօրական Դաշնակցութիւնը“: Այդ Դաշնակցութիւնը, ճիշտ է, գոյութիւն ունեցաւ միայն 9 տարի: Բայց որ նրա հիմնած բոլոր երկրների պրօլետարների շահտենական միութիւնը ապրում է տակաւին, և աւելի ուժեղ քան երբ և իցէ, այդ ամենապերճախօս կերպով վկայում է այսօրւան օրը: Որովհետեւ այսօր, երբ ես գրում եմ այս տողերը, Եւրօպայի և Ամերիկայի պրօլետարիատը զիտում է իր առաջին անգամ ի մի խմբած զօրագնդերը, ի մի խմբած իբրև մի զօրք, մի դրօշակի տակ և մի մօտաւոր նպատակի համար—ութե՛ժամեայ նօրմալ, օրէնքով հաստատած աշխատանքի օրւայ համար, որը պահանջեց առաջին անգամ

1866 թւականին Ինտերնացիօնալի ժընևի կօնգրէսը և կրկին 1889 թւականին Փարիզի բանօրական կօնգրէսը: Ու այսօրւայ տեսարանը ցոյց կտայ բոլոր երկրների կապիտալիստներին և կալւածատէրերին, որ բոլոր երկրների պրօլետարները իրօք արդէն միացած են:

Երանի՛ թէ Մարքսը զե՞ս կանգնած լինէր մօտս, որ սեփական աչքով տեսնէր այդ բոլորը:

Ֆրիդրիխ Էնգելս:

Լօնդօն 1 մայիսի 1890.



Մ Ա Ն Ի Ֆ Է Ս Տ

Կ Օ Մ Ո Ւ Ն Ի Ս Տ Ա Կ Ա Ն Կ Ո Ւ Ս Ա Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն

Եւրօպայում մի ուրուական է շրջում—կօմունիզմի ուրուականը: Այնոր Եւրօպայի բոլոր դօրութիւնները՝ պապը և ցարը, Մէալընիխը և Գիգօն, ֆրանսիական արմատականները և գերմանական սասիկանները սրբազան դաշն են կապել այդ ուրուականը հալածելու համար:

Կայ արդեօք մի դիմադրական կուսակցութիւն, որ իր իշխող հակառակորդների կողմից կօմունիստական շրկուէէր. կա՞յ մի դիմադրական կուսակցութիւն, որ իր կարգին շմեղադրէր կօմունիզմի մէջ թէ աւելի առաջադէմ դիմադրականներին և թէ իր յետադէմ հակառակորդներին:

Այդ փաստը երկու տեսակ եզրակացութեան է բերում:

Կօմունիզմը ճանաչւած է արդէն իրրեւ ոյժ բոլոր Եւրօպական պետութիւնների կողմից:

Ժամանակն է արդէն, որ կօմունիստները ամբողջ աշխարհի առաջ բացարձակ կերպով հրապարակ հանեն իրենց հայեցողութիւնները, իրենց նպատակները և ձգտումները և կօմունիստական ուրուականի մասին տարածւած առասպելներին հակադրեն իր, կօմունիստական կուսակցութեան, Մանիֆէստը:

Այդ նպատակով զանազան ազգութիւնների պատ-

կանող կոմունիստները ժողովել են Լօնդօնում և մշակել ներկայ Մանիֆէստը՝ անգլիական, ֆրանսիական, գերմանական, իտալական, ֆլամանական և դանիական լեզուներով հրատարակելու համար:

ՄԱՆԻՓԷՍՏ

I

ԲՈՒՐԺՈՒԱՆՆԵՐ ԵՒ ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐ

Մինչայժման բոլոր հասարակութիւնների պատմութիւնը դասակարգային կախիւնների պատմութիւն է: ⁴⁾

Աղտոն ու ստրուկը, աղնւականն ու ռամիկը, կալւածատէրը և ճորտը, վարպետն ու քետրգեարը, մի խօսքով, ճնշողը և ճնշւածը կանգնած էին միմեանց դէմ մըշտական հակառակութեան մէջ, մղում էին անընդհատ կռիւմներ թ թագուն, մերթ բացայայտ. կռիւ, որ իւրաքանչիւր տեղամ վերջանում էր կամ ամբողջ հասարակական կառուցւածքի յեղաշրջմամբ, կամ կուռղ դասակարգների ընդհանուր կործանումով:

⁴⁾ Այսինքն, ձիշտ ասած, դա գրաւոր կերպով մեզ հասած պատմութիւն է: 1847 թականին նախնական հասարակութեան պատմութիւնը—հասարակական կազմակերպութիւն, որ նախորդում է բոլոր գրաւոր պատմութիւններին—գրեթէ կատարելապէս անյայտ էր: Դրանից յետոյ, Հաքստաուզենի շնորհիւ, կատարեց համայնական ճողատիրութեան գիւտը Ռուսաստանում իսկ Մաուրէրը ապացուցեց, որ ճողատիրութեան այդ ձևը կազմել է այն հասարակական հիմունքը, որից սկսել են իրենց պատմական զարգացումը բոլոր գերմանական ցեղերը: Վամացկամաց հաստատուց նաև. որ գիւղական համայնքները իրենց համայնական ճողատիրութեամբ կազմել են հասարակութեան սկզբնակաղ ձևը՝ Հնդկաստանից մինչև Իրլանդիա: Վերջապէս այդ նախնական կոմունիստական հասարակութեան ներքին կազմակերպութիւնը, իր տիպիկական ձևով, պարզեց այն ժամանակ, երբ Մորգանը գտաւ տոհմի (gens) իսկական բնութիւնը և նրա դիրքը ցեղի մէջ: Նախնական համայնքի լուծման հետ, սկսւում է հասարակութեան բաժանումն տարրեր, իսկ յետոյ և հակադրական դասակարգերի:

Նախընթաց պատմական շրջաններում մենք գտնում ենք գրեթէ ամենուրեք հասարակութեան լիակատար բաժանումն տարբեր աստիճանների և բազմատեսակ հասարակական դրութիւնների մի ամբողջ սանդուղք: Հին Հնօմի մէջ մենք հանդիպում ենք աղնականների, ասպեանների, սամիկների, սարուկների: Միջին դարերում երևան են գալիս աւաաներ, տեղապահներ, համբարտական վարպետներ, քնարգետներ, և ճորտեր. և այդ դասակարգերից իւրաքանչիւրի մէջ դարձեալ առանձին ստորաբաժանումներ:

Աւատական հասարակութեան անկումից առաջացած ժամանակակից բուրժուական հասարակութիւնը չի վերացրել դասակարգային տարբերութիւնները: Հների տեղ միայն նա դրել է նոր դասակարգեր, մշակել հարստահարութեան նոր եղանակներ և կուրի նոր ձևեր:

Մեր, բուրժուազիայի, դարեշրջանը նշանաւոր է սակայն նրանով, որ նա հասարակացրել է դասակարգային տարբերութիւնները: Ամբողջ հասարակութիւնը բաժանուած է հետզհետէ երկու մեծ թշնամի բանակների, երկու մեծ, ուղղակի իրար դէմ կանգնած դասակարգերի՝ բուրժուազիայի և պրօլետարիատի:

Միջնագարեան ճորտերից առաջ եկաւ առաջին քաղաքների ազգաբնակիւթիւնը: Այդ ազգաբնակիւթիւնից զարգացաւ բուրժուազիայի առաջին տարրերը:

Անբրիկայի գիւտը և Աֆրիկայի շուրջնուարկումը նոր ասպարէզ ստեղծեցին ծնունդ առնող բուրժուազիայի համար: Արեւելեան Հնդկաստանի և շինաստանի վաճառանոցները, Ամերիկայի գաղութացումը, փոխանակութիւնը գաղութների հետ, փոխանակութեան միջոցների և սոսաւարակ ապրանքների բազմացումը մինչև այդ չլուած գարկ տւին առևտրին, նաւարկութեանը ու արդիւնաբերութեանը և այդպիսով արագացրին քայքայող աւատական հասարակութեան մէջ յեղափոխական տարրի աճումը:

Մինչ այդ գոյութիւն սւնեցող աւատական կամ համբարական արդիւնաբերութեան եղանակը այլ ևս անկարող էր բաւարարութիւն տալ նոր վաճառանոցների աճող պէտքերին: Նրա տեղ երևան եկաւ մանուֆակտուրան: Համբարական վարպետներին եւ մղեց արդիւնաբերական միջին դասակարգը. աշխատանքի բաժանումն զսնագան համբարութիւնների միջև չբացաւ, տեղի տալով աշխատանքի բաժանումը արհեստանոցի մէջ:

Սակայն վաճառանոցները շարունակ աճում էին, պահանջը շարունակ ուժեղանում: Մանուֆակտուրան նայնպէս անբաւարար գտնուեցաւ: Եւ շոյին ու մեքենայականութիւնը յեղափոխեցին արդիւնաբերութիւնը: Մանուֆակտուրայի տեղը գրաւեց նորագոյն խոշոր արդիւնաբերութիւնը, միջին դասի տեղը—արդիւնաբերող միլիօնատէրերը, ինդուստրիական բանակների առաջնորդները՝ արդի բուրժուաները:

Խոշոր արդիւնաբերութիւնը ստեղծեց համաշխարհային վաճառանոց, որը նախապատրաստել էր Ամերիկայի գիւտով: Համաշխարհային վաճառանոցն անսահման զարկ աւաւ առևտրին, նաւագնացութեանը և ցամաքային հազարդակցութեան միջոցներին: Այդ նորից ազդեց արդիւնաբերութեան ծաւալման վրայ, և նոյն չափով, որ չափով աճում էին առևտուրը, նաւագնացութիւնը և երկաթ ուղիները, աճում-զարգանում էր բուրժուազիան, բազմապատկում էր իր կապիտալները և ետ մղում Միջին դարերից մնացած բոլոր միւս դասակարգերը:

Այդպիսով մենք տեսնում ենք, որ ժամանակակից բուրժուազիան ոչ այլ ինչ է, բայց եթէ արդիւնք երկարատե գորգացման, արտադրութեան և հազորդակցութեան ձևերի մէջ եղած մի ամբողջ շարք յեղաշրջումների:

Բուրժուազիայի զարգացման ամեն մի աստիճանը ուղեկցուած էր նրա քաղաքական առաջադիմութեան հա-

մագառատսիան քայլով:

Բուրժուազիան՝ ճնշած ֆէօդալական տիրապետութեան տակ, զինւած և ինքնավար մի միութիւն կոմունայի⁵⁾ մէջ, այստեղ անկախ քաղաքային հասարակապետութիւն, այնտեղ միապետութեան մէջ երրորդ հարկատու դաս, ապա մանուֆակտուրայի շրջանում՝ սահմանափակ կամ միահեծան պետութեան մէջ՝ հակակշիւտ ընդէմ ազնւականութեան. զլիսաւոր պատւարը բոլոր խոշոր միապետութիւնների առհասարակ,—այդ բուրժուազիան, խոշոր արդիւնարեւութեան և համաշխարհային վաճառանոցի ծագման օրից, նւաճեց իր համար նորագոյն սահմանադրական պետութեան մէջ բացառիկ քաղաքական իշխանութիւն: Արդի պետական իշխանութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի յանձնաժողով, որը կոչւած է բուրժուազիայի հասարակական գործերը վարելու:

Բուրժուազիան խաղացել է պատմութեան մէջ մի վերին աստիճանի յիզափոխական դեր:

Ամեն տեղ, ուր բուրժուազիան տիրապետութիւն է ձեռք բերել, նա քանդել է բոլոր աւատական, նահապետական, հովուերգական յարաբերութիւնները: Նա անգըթօրէն խորտակել է աւատական պէս-պէս կապերը, որոնք միացնում էին մարդուն իր հրամանատարների հետ, և չէթողել մարդկանց մէջ այլ կապ, բացի մերկ շահից, բացի անսիրտ „նաղդ վճարից“: Բարեպաշտ յափշտակութեան ասպետական ոգեւորութեան և մանր-բուրժուական սանտիմենտալիզմի բռնկումները նա խեղդել է նեղ, մանրահաշիւ հաստիութեան սառն ջրի մէջ: Մարդկային անհատական արժանաւորութիւնները նա վերածել է փոխանակու-

⁵⁾ Այդպէս էին կոչւում Իտալիայի և Ֆրանսիայի քաղաքացիների քաղաքային համայնքները, այն օրից, երբ նրանք իրենց ֆէօդալ իշխաններից գնել կամ խլել էին ինքնավարութեան իրաւունքը:

թեան արժէքի, և ձեռք բերած կամ երաշխաւորեալ աղատութեան բազմութիւ տեսակների տեղ նա գրել է առևտրի անհոգի աղատութիւնը: Մի խօսքով, փոխարէն կրօնական և քաղաքական պատրասկներով քողարկւած շահագործութեան, նա հաստատել է բացարձակ, ուղղակի, չոր և անամօթ շահագործութիւն:

Բուրժուազիան զրկել է սրբուզան հմայքից գործունէութեան այն բոլոր տեսակները, որոնց վրայ մինչև օրս նայում էին բարեպաշտ երկիւղածութեամբ: Բժիշկ, իրաւաբան, քահանայ, բանաստեղծ, գիտնական—բոլորին նա դարձրել է վարձու բանւորներ:

Բուրժուազիան պատռել է ընտանեկան յարաբերութիւններից քնքուշ-սանտիմենտալ քօղը, դարձնելով նրանց սոսկ փողային հաշիւների գործ:

Բուրժուազիան մերկացրել է այն ծոյլ անշարժութիւնը, որը կազմում էր մի բնական լրացումն ոյժի կոպիտ միջնադարեան արտայայտութեան և որը մինչև օրս հիացնում է յետադիմականներին: Նա էր տուճիւնը, որ ցոյց տւեց, թէ ինչ արդիւնքներ կարող է ստեղծել մարդկային գործունէութիւնը: Նրա արած հրաշագործութիւնները բոլորովին այլ են, քան Եգիպտական աշտարակները, Հռոմէական ջրանցքերը և Գոթական մայր-տաճարները. նրա նւտճումները նման շին բոլորովին ազգերի գաղթականութիւններին և Խաչակիր Արշաւանքներին:

Բուրժուազիան չի կարող գոյութիւն ունենալ, առանց անդադար յեղափոխելու արդիւնագործութեան միջոցները, ուրեմն և արդիւնագործական յարաբերութիւնները, ուրեմն և բովանդակ հասարակական յարաբերութիւնները: Ընդհակառակը, արդիւնագործութեան հին եղանակների անփոփոխ պահպանումն առաջին պայմանն էր նախկին արդիւնաբերական դասակարգերի գոյութեան համար: Արդիւնագործութեան անընդհատ յեղաշրջումն, հասարակական յա-

ըրբերութիւնների մշտական սասանումն, յաւիտենական անապահոփութիւն և շարժում,— ահա բուրժուական դարե- շրջանի յատկանիշները, որոնցով նա տարբերում է միւս դարեշրջաններից: Բոլոր ամուր, քարացած յարաբերու- թիւնները, իրենց համապատասխան վաղեմի հասկացողու- թիւնները և հայեցողութիւնների հետ միասին, խորտակ- ւում են, բոլոր նոր գոյացոյնները, դեռ չստեղծուած, հնա- նում: Բոլոր զասայինն ու անշարժը գոյութիւնում է, բո- լոր սրբութիւնները պղծւում են, և մարդիկ վերջ ի վեր- ջոյ հարկադրւած են՝ աշաւբը կերպով նայել իրենց կեն- սական գրութեան, իրենց փոխադարձ յարաբերութիւն- ներին:

Իր ապրանքները սպառելու անընդհատ աճող պա- հանջը զրգում է բուրժուադիային պտտել ամբողջ երկրա- փնդի շուրջը: Նա պէտք է ամեն տեղ թափանցի, ամեն տեղ հաստատւի, ամեն տեղ յարաբերութիւնների մէջ մտնի:

Համաշխարհային վաճառանոցի շահագործութեամբ բուրժուադիան կօսմօպօլիտական դարձրեց բոլոր երկրնե- րի արդիւնաբերութիւնը և սպառումը: Ի մեծ վիշտ յե- տադիմականների, նա խլեց արդիւնաբերութիւնից նրա ազ- գային հիմքը: Նախնական ազգային արդիւնաբերութիւն- ները ոչնչացւած են և դեռ օրբստօրէ ոչնչացւում են: Նրանք դուրս ետ մղւում նոր արդիւնաբերութիւնների կող- մից, որոնց ներմուծութիւնը կենսական ինդիք է բոլոր քաղաքակիրթ ազգերի համար և որոնք ոչ միայն տեղա- կան հում նիւթեր են մշակում, այլ և հեռաւոր երկրների արդիւնքներ: Իսկ այդ նոր արդիւնաբերութիւնների պատ- րաստած ապրանքները զործ են ածւում ոչ միայն տեղա- կան սպառման համար, այլ և բոլոր աշխարհամասերում: Առաջւայ պահանջները, որոնց տեղական բերքերը գոհա- ցում էին տալիս, տեղի են աւել նոր պահանջների, որոնց գոհացման համար անհրաժեշտ են հեռաւոր երկրների և

ամենատարբեր կլիմաների արդիւնքներ: Նախկին տեղա- կան կամ ազգային ինքնաբաւականութեան և սահմանա- փակութեան տեղ ծնունդ առաւ բազմալոգմանի փոխանա- կութիւն և ազգերի փոխադարձ կախումն իրարից: Եւ այդ ոչ միայն նիւթական, այլ և մատուր զործունէութեան արգասիքների վերաբերեալ: Առանձին ազգերի մատուր արդիւնքները դաւնում են ընդհանուր բարիք: Ազգային միակողմանիութիւնը և սահմանափակութիւնը աւելի ու ա- վելի են անհնարին դաւնում, և բազմաթիւ ազգային և տե- ղական գրականութիւններից կազմւում է մի համաշխա- րային գրականութիւն:

Չնորհիւ արդիւնագործութեան միջոցների արագըն- թաց կատարելագործման և անսահման դիւրաւոր դարձած հաղորդակցութեան, բուրժուադիան մղում է բոլոր— նոյն- պէս և ամենաբարբարոս— ազգերին դէպի քաղաքակրթու- թիւն: Ապրանքների էժան գները ներկայանում են նրա ձեռքում այն ծանր հրատափր, որի միջոցով նա խորտա- կում է բոլոր շինական պարիսպները, որի օգնութեամբ նա ստիպում է անձնատուր լինել իրեն բարբարոսների դէպի օտարներն ունեցած ամենայամառ ատելութիւնը: Նա ստիպում է բոլոր ազգութիւններին ընդունել բուրժու- ական արդիւնագործութեան եղանակը, սպառնալով նրանց հակասակ դէպքում ոչնչացումով: Նա ստիպում է նրանց մացնել իրենց մէջ քաղաքակրթութիւն առաւօր, այսինքն դաւնել բուրժուա: Մի խօսքով, նա ստեղծում է մի աշ- խարհ իր սեփական պատկերի նման:

Բուրժուադիան հպատակացրել է գիւղը քաղաքին: Նա գոյութեան է կանչել ահագին քաղաքներ, վերին առ- տիճանի բազմացրել է քաղաքային ազգաբնակչութիւնը ի վնաս գիւղականի և այդպիսով ազատել է ազգաբնակչու- թեան մի մասը գիւղի ըթացուցիչ մթնոլորտից: Եւ ինչ- պէս գիւղը քաղաքից, նոյնպէս էլ բարբարոս / և կիսա-բար-

բարոս երկիրները նա կախման մէջ է գրել քաղաքակիրթ երկրներինց, գիւղացիական ժողովուրդները՝ բուրժուական ժողովուրդներինց, Արևելքը՝ Արևմուտքինց:

Բուրժուական հետզհետէ վերջ է դնում արդիւնագործութեան միջոցների, կաշքի և ազգաբնակչութեան ցիրուցանութեանը: Նա առաջ է բերել ազգաբնակչութեան կուտակումներ, կենդրոնացրել է արդիւնագործութեան միջոցները, այլփոփել է մի քանի ձեռքերում սեփականութիւնը: Դրա անհրաժեշտ հետեանքն էր քաղաքական կենտրոնացումն: Անկախ, հազիւ իրար հետ կապած ինքնուրույններ, տարբեր շահերով, օրէնքներով, կառավարութիւններով և մաքսերով ի մի շողկապեցին, կազմելով մի ազգ մի կառավարութիւն, մի օրէնք, մի ազգային դատակարգաչին ինտերես, մի մաքսային սահմանագիծ:

Իր հազիւ հարիւր տարւայ դասակարգային տիրապետութեան ժամանակ բուրժուական ստեղծել է աւելի բաղմամբիւ և աւելի հսկայական արդիւնագործութեան ոյժեր, քան բոլոր նախորդ սերունդները միասին: Բնութեան ոյժերի նւաճումը, մեքենաները, քիմիայի գործադրութիւնը երկրագործութեան և արդիւնագործութեան մէջ, շողեւաւարկութիւնը, երկաթուղիները, էլեքտրական հեռագրագծերը, բովանդակ աշխարհամասերի շահագործութիւնը, գետերի յարմարեցումն նաւարկութեան համար, կարծես հողից յանկարծ բուսած ամբողջ ազգաբնակչութիւններ... մըրը արդեօք նախընթաց դարերինց կարող էր գուշակել, որ այսչափ արդիւնաբերող ոյժեր անշարժ նիրհում են հասարակական աշխատանքի ծոցում:

Այդպիսով մենք տեսանք, որ արդիւնագործութեան և հաղորդակցութեան միջոցները, որոնց վրայ բուրժուական հիմնել է իր զօրութիւնը, սկիզբ են առել դեռ աւատական հասարակութեան մէջ: Արդիւնագործութեան և հաղորդակցութեան այդ միջոցների զարգացման մի որոշ

աստիճանի վրայ, այն պայմանները, որոնց մէջ արդիւնաբերում և փոխանակում էր աւատական հասարակութիւնը, երկրագործութեան և մանուֆակտուրային արդիւնագործութեան աւատական կազմակերպութիւնը, մի խօսքով, աւատական սեփականատիրական յարաբերութիւնները այլ ևս անհամապատասխան էին դարձել արդէն զարգացած արդիւնաբերող ոյժերի հետ: Փոխարէն նպաստելով այդ յարաբերութիւնները ճնշում էին արդիւնագործութիւնը: Նրանք դարձել էին նրա կաշկանդիչ շղթաները: Նրանք պէտք է խորտակէին— և նրանք խորտակեցին:

Նրանց տեղ ասպարէզ եկաւ ազատ մրցութիւնը իրեն համապատասխան հասարակական և քաղաքական կազմով, բուրժուա դասակարգի անտեսական և քաղաքական տիրապետութեամբ:

Մեր աչքի առաջ կատարում է նոյնօրինակ մի շարժում:

Բուրժուական արդիւնագործութեան և փոխանակութեան յարաբերութիւնները, բուրժուական սեփականատիրութեան յարաբերութիւնները, արդի բուրժուական հասարակութիւնը, որը հրաշագործութեամբ առաջ է բերել արդիւնագործութեան և հաղորդակցութեան այդպիսի վիթխարի միջոցներ, նման է այն կախարդին, որը անզօր է այլ ևս տիրանալու ստորեկրեայ ոգիներին, որոնց նա ինքն երբեմն դուրս է կանչել: Վերջին տասնամեակների ընթացքում, առևտրի և արդիւնաբերութեան պատմութիւնը արդի արդիւնաբերող ոյժերի ըմբոստացման պատմութիւնն է՝ ընդդէմ արդիւնաբերութեան արդի կազմակերպութեան, ընդդէմ սեփականատիրական յարաբերութիւնների, որոնք կազմում են բուրժուակիայի գոյութեան և տիրապետութեան կենսական պայմանը: Բաւական է անուանել առևտրական ճգնաժամերը, որոնց պարբերական կրկնութիւնը աւելի ու աւելի է սպառնական դառնում ամբողջ բուրժու-

ական հասարակութեան գոյութեան համար: Այդ առևտրական ճգնաժամերի միջոցին կանոնադրապէս ոչնչացուած է ոչ միայն պատրաստած ապրանքների մի մասը, այլ և կանխաւ ձեռք բերած արդիւնագործական ոյժերը: Ճգնաժամերի ժամանակ երեւան է գալիս մի հասարակական համաճարակ, որը բոլոր նախկին շրջանների համար անհեթեթութիւն կթւար—գերարտադրութեան համաճարակը: Հասարակութիւնը յանկարծ ընկնում է ժամանակաւոր բարքարոսական վիճակի մէջ. թւում է, որ սովը կամ մի ընդհանուր աւերիչ պատերազմ զրկել են հասարակութիւնը կենսական բոլոր միջոցներից. արդիւնաբերութիւնը և առևտուրը թւում են բոլորովին ոչնչացւած, և ինչպէ՞ս Որովհետև հասարակութիւնը չափից դուրս քաղաքակրթւած է, որովհետև նա չափից դուրս կենսական միջոցներ աւելի, որովհետև նրա առևտուրն ու արդիւնաբերութիւնը չափից դուրս զարգացած են: Բուրժուազիայի արամադրութեան տակ գտնուող արդիւնագործական ոյժերը այլ ևս չի նպաստում բուրժուական սեփականատիրական յարաբերութիւնների պահպանմանը. ընդհակառակը, նրանք չափազանց աճել են այդ յարաբերութիւնների համար և նրանց մէջ խոչընդոտի են հանդիպում. և հէնց որ նրանց յաջողում է յաղթայարել այդ խոչընդոտը, նրանք քարուքանդ են անում սփռայլ բուրժուական հասարակութիւնը և սպառնում բուրժուական սեփականութեան գոյութեանը: Բուրժուական յարաբերութիւնները չափազանց անձուկ են զարձել իրենց ստեղծած հարստութիւնները պարունակելու համար:—Ինչպէս է արդեօք բուրժուազիան դիմադրում ճգնաժամերին: Մի կողմից, արդիւնագործական ոյժերի ամբողջ քանակների ակամայ ոչնչացմամբ, միւս կողմից, նոր վաճառանցների նաճումով և հների աւելի հիմնուոր շահագործութեամբ: Ի՞նչպէ՞ս ուրեմն: Նախապատրաստելով աւելի լայն և վիթխարի ճգնաժամեր և պակասեցնելով նրանց առաջն

առնելու միջոցները:

Այն ղէնքերը, որոնցով բուրժուազիան սապալեց աղատականութիւնը, այժմ դառնում են իրեն, բուրժուազիայի, դէմ:

Բայց բուրժուազիան ոչ միայն կռել է այն ղէնքերը, որոնք նրան մահացու հարւած են հասցնելու, նա ծնունդ է աւել և այն մարդկանց, որոնք պէտք է գործադրեն այդ ղէնքերը—ժամանակակից բանւորներին, պրօլետարներին:

Որչափ զարգանում է բուրժուազիան, այսինքն կապիտալը, նայնչափ էլ զարգանում է պրօլետարիատը—մի դասակարգ ժամանակակից բանւորների, որոնք ապրում են քանի դեռ աշխատանք են գտնում, և աշխատանք են գրանում, քանի դեռ իրենց այդ աշխատանքը աճեցնում է կապիտալը: Այդ բանւորները, որոնք հարկադրւած են հատիկ-հատիկ ծախել իրենց, ոչ այլ ինչ են, բայց եթէ մի ապրանք, ինչպէս և ուրիշ շատ վաճառանիթեք, ուստի և ենթարկւած են մրցութեան բոլոր փոփոխութիւններին, վաճառանոցի բոլոր ատատնումներին:

Այդ բանւորների աշխատանքը, շնորհիւ մեքենաների գործածութեան ընդարձակման և աշխատանքի բաժանման կորցրել է իր ինքնուրոյն բնաւորութիւնը, ապա և գրաւչութիւնը աշխատաւորի համար: Աշխատաւորը զարձել է մեքենայի մի մասնիկը, որից պահանջուում են միայն ամենահասարակ, միօրինակ և դիւրուսումնասիրելի շարժումներ: Ձեռնարկողի ծախքերը բանւորական ոյժ գնելու համար սահմանափակուում են գրեթէ միայն այն կենսական միջոցներով, որոնք անհրաժեշտ են բանւորի ապրուստի և նրա ցեղի շարունակութեան համար: Իսկ որեւէ ապրանքի ուրեմն և աշխատանքի—գինը հաւատար է նրա արտադրութեան ծախքերին: Ուստի, քանի աւելի է աշխատանքը կորցնում իր գրաւչութիւնը, այնքան աւելի է ընկնում աշխատաւորը: Առաւել ևս: Քանի աւելի են աճում մեքե-

նաների գործածութիւնը և աշխատանքի բաժանումը, այնքան աւելի է աճում բանուորի աշխատանքի քանակութիւնը — լինի դա աշխատանքի ժամերի երկարացման կամ որոշ ժամանակամիջոցում պահանջելիք աշխատանքի աւելացման միջոցով, լինի դա մեքենաների շարժընթացքի արագացմամբ կամ այլ կերպ:

Ժամանակակից արդիւնաբերութիւնը վերածել է նահապետական վարպետի փոքրիկ արհեստանոցն առևտրական կապիտալիսմի հսկայական գործարանի: Գործարաններում խմբած բանւորական մասսաները կազմակերպւում են որպէս զինւորներ: Նրանք զբաղ են սպաների և ենթասպաների ամբողջ մի հիւէրարտիայի հսկողութեան ներքոյ, որպէս արդիւնաբերութեան բանակի զինւորներ: Նրանք ոչ միայն բուրժուա դասակարգի, բուրժուական պետութեան ստրուկներն են, այլ և ստորացուած են ամենօր, ամեն ժամ մեքենայի, վերակացուի և նամանաւանդ բուրժուա ձեռնարկողի կողմից: Եւ այդ բռնակալութիւնը այնքան աւելի գծուծ, ասելի և դառնալից է, որքան աւելի բացարձակօրէն նա յայտարարում է շահը, իբրև իր միակ նպատակը:

Որքան աւելի է բշտում ձեռագործի մէջ ճարպիկութեան և ոյժի պահանջը, այսինքն որքան աւելի է զարգանում ժամանակակից արդիւնաբերութիւնը, այնքան աւելի է ազամարդկանց աշխատանքը դուրս մղում կանանց աշխատանքով: Բանուոր դասակարգի վերաբերեալ, սեռի և տարիքի տարբերութիւնները հասարակական ոչ մի նշանակութիւն չունեն այլ ևս: Զեռնարկողը տեսնում է իր առջև միայն աշխատանքի գործիքներ, որոնց գինը փոփոխուում է համապատասխան տարիքի և սեռի:

Երբ գործարանատէրերը ծծում են բանւորներից ինչ որ կարելի է, երբ վերջիններս ստանում են զրամով իրենց աշխատութարձը, սրանց վրայ թափւում են իսկոյն

բուրժուադիայի միւս մասերը — տանուտէրերը, խանութպանները, վաշխառուները և այլն:

Միջին դասի ցածր խաւերը՝ մանր արդիւնաբերողները, վաճառականները և բանտիէրները, արհեստաւորները և զիւղացիք, — բոլոր այդ խաւերն էլ անցնում են պրօլետարիատի շարքերը, մոտամբ այն պատճառով, որ նրանց փոքր կապիտալը անբուսական է խոշոր արդիւնաբերութեան համար և չի զիմանում խոշոր կապիտալիստների մրցումին, մասամբ էլ այն պատճառով, սր նրանց արդիւնաբերելու տեխնիկական եղանակները կորցնում են իրենց արժէքը նոր եղանակների առաջ: Այդպէս, պրօլետարիատը գոյանում է ազգարնակութեան բոլոր դասակարգներից:

Պրօլետարիատն անցնում է զարգացման զանազան աստիճաններ: Նրա կռիւը բուրժուադիայի դէմ սկսւում է նրա գոյութեան օրից:

Սկզբում կուտւում են հատիկ հատիկ բանւորներ, յետոյ մի որեէ գործարանի բանւորներ, ապա արդիւնաբերութեան մի որեէ ճիւղի բանւորներ մի տեղում՝ իրենց անմիջապէս հարստահարող բուրժուաների դէմ: Նրանք ուղղում են իրենց հարւածները ոչ միայն բուրժուական արդիւնաբերութեան պայմանների, այլ և արդիւնաբերութեան գործիքների դէմ. նրանք ոչնչացնում են օտարերկրեայ ապրանքները, որոնց մրցումը զրկում է նրանց աշխատանքից, նրանք վշրում են մեքենաները, հրդեհում գործարանները, ձգտելով վերահաստատել միջնադարեան աշխատաւորի ընկած դրութիւնը:

Այդ աստիճանի վրայ բանւորները կազմում են մի մասսա, ցրւած երկրի ամբողջ տարածութեան վրայ և մրցման շնորհիւ բաժանւած իրարից. բանւորների մասսայական շարժումները ոչ թէ նրանց համբրաշխութեան, այլ բուրժուադիայի միութեան հետևանքն են, բուրժուադիայի, որն իր քաղաքական նպատակներին հասնելու համար պէտ-

քէ և զեռ կարող է շարժման մէջ դնել պրօլետարիատը։ Ուրեմն, այդ աստիճանի վրայ պրօլետարները կուտմ են ոչ թէ իրենց թշնամիների, այլ իրենց թշնամիների թըշնամիների դէմ, այսինքն ինքնակալ միապետութեան մնացորդներին, հօդային սեփականատէրերի, ոչ-ինքուստրիական բուրժուազիայի և մանր բուրժուազիայի դէմ։ Այդպիսով ամբողջ պատմական շարժումը կենդրոնացած է բուրժուազիայի ձեռքում։ Իւրաքանչիւր այդ ճանապարհով տարւած յաղթութիւն՝ բուրժուազիայի յաղթութիւնն է։

Բայց արդիւնաբերութեան դարգացման հետ աճում է ոչ միայն պրօլետարիատի քանակը, այլ և նա համախըմբում է մեծ մասսաներով, աճում է նրա ոյժը և նա զգում է այդ։ Գրօլետարների ինտերնոնների և նրանց կենսական զրութիւնների միջև եղած տարբերութիւնները աւելի և աւելի են շքանում, մինչդեռ մեքենայականութիւնը աւելի ու աւելի է հարթում աշխատանքի մէջ եղած տարբերութիւնները և իջնցնում աշխատավարձը գրեթէ ամենուրեք մինչև միևնոյն ցածր աստիճանը։ Բուրժուաների միջև աճող մրցումը և դրանից բղխող առևտրական ճղնաժամերը աւելի փոփոխական են դարձնում բանուորների աշխատավարձը. մեքենայականութիւնը իր արագ զարգացմամբ և անընդհատ կատարելագործութեամբ օրստօր է աւելի և աւելի է անապահով դարձնում նրանց կացութիւնը. առանձին բանուորների և բուրժուաների միջև եղող ընդհարումները աւելի և աւելի են ընդունում երկու դասակարգերի ընդհարումների բնաւորութիւն։ Բանուորները սկսում են միութիւններ կազմել բուրժուաների դէմ. նրանք պաշտպանում են միացած ոյժերով իրենց աշխատավարձը։ Նրանք մինչև անգամ կազմում են յարատե միութիւններ, որպէսզի հաւանական խլրտումների ժամանակ կարողանան ապահոված լինել իրենց զրութիւնը։ Տեղ-տեղ կռիւն անցնում է ապստամբութեան։

Երբեմն-երբեմն բանուորները յաղթում են, բայց միայն ժամանակաւորապէս։ Նրանց կուր իսկական հետևանքը ոչ թէ անմիջական յաղթութիւնն է, այլ բանուորների աւելի լայն մասսաների միախմբումը։ Դրան նպաստում են հարգակցութեան զարգացող միջոցները, որոնց ստեղծում է խոշոր արդիւնաբերութիւնը և որոնք փոխադարձ կապեր են ստեղծում զանազան տեղերի բանուորների մէջ։ Բաւական են միայն այդ կապերը, որպէսզի միևնոյն բնաւորութիւն կրող բոլոր տեղական կռիւները կենդրոնանան և կազմեն մի ազգային, մի դասակարգային կռիւ։ Իսկ իւրաքանչիւր դասակարգային կռիւ քաղաքական կռիւ է։ Եւ այդ միութիւնը, որի համար միջնադարեան քաղաքացուն հարկաւոր էին, այն ժամանակայ նեղ ճանապարհներով, հարկաւոր տարիներ, ժամանակակից բանուորներն իրագործում են երկաթուղու միջոցով քիչ տարիների ընթացքում։

Գրօլետարների այդ կազմակերպումն իբրև դասակարգ, հետևաբար և իբրև քաղաքական կուսակցութիւն, խախտում է ամեն ըուպէ, շնորհիւ բանուորների մէջ տիրող մրցման։ Բայց նա միշտ նորից վերականգնում է, աւելի ուժեղ, աւելի ամուր և աւելի հզօր։ Օգտուելով բուրժուազիայի մէջ գոյութիւն ունեցող ներքին երկպառակութիւններից, նա ստիպում է պաշտպանել օրէնքի միջոցով բանուորների մի քանի առանձին շահերը։ Այդպէս, 10-ժամեայ աշխատանքի բիլլը Անգլիայում։

Հին հասարակութեան ծոցում կատարող ներքին ընդհարումներն առհասարակ ուժեղ կերպով նպոտտում են պրօլետարիատի զարգացմանը։ Բուրժուազիան շարունակ կուր մէջ է. սկզբում ազնւականութեան դէմ, յետոյ բուրժուազիայի այն մասերի դէմ, որոնց շահերը հակառակ են խոշոր արդիւնաբերութեան զարգացմանը, և միշտ օտար երկրների բուրժուազիայի դէմ։ Բոլոր այդ կռիւների ժա-

նաճաման պայմաններին: Պրօլետարները կարող են գրաւել արդիւնաբերող հասարակական ոյժերը միայն այն ժամանակ, երբ նրանք կ'ոչնչացնեն իւրացման սեփական եղանակը, իսկ զրա հետ միասին և մինչև այժմ գոյութիւն ունեցող իւրացման բոլոր եղանակները: Սեփական ոչինչ պրօլետարները չունեն ապահովելու. նրանք խօրտակելու են բոլոր մինչոյժման մասնաւոր ապահովութիւնները և մասնաւոր արտօնութիւնները:

Մինչայժման բոլոր շարժումները եղել են փոքրամասնութեան շարժումներ կամ թէ կատարել են յօգուտ փոքրամասնութեան: Պրօլետարական շարժումը անագին մեծամասնութեան ինքնուրոյն շարժումն է, յօգուտ անագին մեծամասնութեան: Պրօլետարիատը, ներկայ հասարակութեան ամենատորին խաւը, չի կարող բարձրանալ, ուղղել, առանց օդը ցնդելու ամբողջ վերնաշէնքը, որը կազմում է ներկայ պաշտօնական հասարակութիւնը:

Պրօլետարիատի կռիւր բուրժուազիայի դէմ, եթէ ոչ իր էութեամբ, գոնէ իր ձեռով նախ և առաջ ազգային կռիւ է: Իւրաքանչիւր երկրի պրօլետարիատ պէտք է բնականաբար նախ հաշիւ տեսնէ իր սեփական բուրժուազիայի հետ:

Ներկայացնելով պրօլետարիատի դարգացման ամենաընդհանուր աստիճանները, մենք հետևեցինք ներկայ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող շատ թէ քիչ թագուն քաղաքացիական կռիւն մինչև այն կէտը, երբ նա փոխում է բացարձակ յեղափոխութեան, և պրօլետարիատը, բուրժուազիայի բռնի տապալման միջոցով, հաստատում է իր տիրապետութիւնը:

Ինչպէս մենք տեսանք, մինչայժման բոլոր հասարակութիւնները հիմնւած էին ճնշող և ճնշւած դասակարգերի ներհակութեան վրայ: Բայց որևէ դասակարգ ճնշելու համար, պէտք է ապահովել նրան գոյութեան այնպիսի պայմաններ, որոնց մէջ նա կարողանայ գէթ քարշ տալ

իր ստրկական գոյութիւնը: Ճորտատիրութեան շրջանում ճորտը կարողացաւ բարձրանալ մինչև համայնքի անդամի աստիճանը, ինչպէս որ աւատական միապետութեան լծի տակ մանր քաղաքացին կարողացաւ դառնալ բուրժուա: Ժամանակակից աշխատաւորը, ընդհակառակը, փոխանակ բարձրանալու արդիւնաբերութեան առաջադիմութեան հետ, ընկնում է աւելի, քան իր դասակարգի գոյութեան պայմանները: Աշխատաւորը դառնում է մուրացկան, իսկ մուրացկանութիւնը դարգանում է աւելի արագ, քան ազգաբնակչութիւնը և հարստութիւնը: Ակնբեր է արդէն, որ բուրժուազիան անընդունակ է այլ ևս երկար ժամանակ հասարակութեան տիրող դասակարգը մնալու և իր դասակարգի գոյութեան պայմանները հասարակութեան գոյութիւնը կարգաւորող օրէնքը դարձնելու: Նա անընդունակ է իշխելու, որովհետև նա անընդունակ է ապահովելու իր ստրուկների գոյութիւնը, նոյնիսկ ստրկութեան սահմաններում, որովհետև նա ստիպւած է իր ստրկին այնպիսի դրութեան հասցնելու, երբ ինքը պէտք է կերակրէ նրան, փոխարէն նրանից կերակրելու: Հասարակութիւնը չի կարող այլ ևս ապրել նրա տիրապետութեան տակ, որովհետև նրա կեանքն անհաշտելի է դարձել հասարակութեան հետ:

Բուրժուա դասակարգի գոյութեան և տիրապետութեան համար, հարստութիւնների կուտակումը մասնաւոր անհատների ձեռքում, կապիտալի գոյացումը և աճումը էական պայմաններ են. իսկ կապիտալի գոյութեան նախապայմանը վարձու աշխատանքն է: Վարձու աշխատանքն յենում է բացառապէս բանուրների փոխադարձ մրցման վրայ: Արդիւնաբերութեան դարգացումը, որի անկամ և անդիմադիր կրողը բուրժուազիան է, փոխարէն առանձնացնելու բանուրներին մրցման միջոցով, առաջ է բերում նրանց մէջ ընկերակցութեան միջոցով յեղափոխական մի-

ութիւն: Այդպիսով, խոշոր արդիւնաբերութեան զարգացմամբ, բուրժուազիայի ոտների տակից հեռանում է այն հողը, որի վրայ նա արտադրում է և իւրացնում արդիւնքները: Նա արտադրում է նախ և առաջ իր սեփական գերեզմանափոքներին: Նրա անկումը և պրօլետարիատի յաղթութիւնը հաստատապէս անխուսափելի են:

I I.

ՊՐՕԼԵՏԱՐՆԵՐ ԵՒ ԿՕՄՈՒՆԻՍՏՆԵՐ

Ի՞նչպէս են վերաբերում կոմունիստները պրօլետարներին առհասարակ:

Կոմունիստները չեն կազմում մի առանձին կուսակցութիւն ուրիշ բանւորական կուսակցութիւնների հանդէպ: Նրանք չունեն ամբողջ պրօլետարիատի շահերից տարբերող շահեր:

Նրանք չեն առաջարկում առանձին սկզբունքներ, որոնց համաձայն կցանկանային ձեռն պրօլետարական շարժումը:

Կոմունիստները տարբերում են միւս պրօլետարական կուսակցութիւններից միայն նրանով, որ մի կողմից, զանազան ազգային պրօլետարական կուսակցութիւնների մէջ նրանք շեշտում և պաշտպանում են համայն պրօլետարիատի ընդհանուր, ազգութիւնից անկախ շահերը, միւս կողմից, նրանով, որ պրօլետարիատի և բուրժուազիայի կուսի զարգացման գտնազան աստիճանների վրայ նրանք պաշտպանում են միշտ ամբողջ շարժման շահը:

Ուրեմն, գործնականապէս կոմունիստները կազմում են բոլոր երկրների բանւորական կուսակցութիւնների մէջ ամենամիճառական և միշտ առաջընթաց մասը. տեսականա-

պէս պրօլետարիատի, մնացած մասսայի հանդէպ նրանք ունեն այն առաւելութիւնը, որ ըմբռնում են պրօլետարական շարժման պայմանները, ընթացքը և ընդհանուր հետեանքները:

Կոմունիստների մերձաւոր նպատակը նոյնն է, ինչ որ և բոլոր միւս պրօլետարական կուսակցութիւնները նպատակը, այսինքն, պրօլետարիատի կազմակերպումն իբրև դասակարգ, բուրժուազիայի տիրապետութեան տապալումը, քաղաքական իշխանութեան նաճումը պրօլետարիատի միջոցով:

Կոմունիստների տեսական գրութիւնները բնաւ չեն հիմնւում այս կամ այն գաղափարի և սկզբունքի վրայ, որոնց հնարել կամ գտել է այս կամ այն համաշխարհային վերանորոգիչը:

Նրանք ընդհանուր արտայայտութիւն են գոչութիւն ունեցող դասակարգային կուսի իրական յարաբերութիւնների, մեր աչքի առաջ կատարւող պատմական շարժման: չին սեփականատիրական յարաբերութիւնների տապալումը միայն կոմունիզմի բնորոշ յատկութիւնը չէ:

Բոլոր սեփականատիրական յարաբերութիւնները ենթակայ են եղել մշտական պատմական փոփոխութեան, մշտական պատմական կերպարանափոխութեան: Այդպէս օրինակ, Փրանսիական յեղափոխութիւնը վերացրել է աւատական սեփականութիւնը յօգուտ բուրժուական սեփականութեան:

Կոմունիզմի բնորոշ յատկութիւնը կայանում է ոչ թէ սեփականութեան վերացման մէջ, ընդհանրապէս, այլ միայն բուրժուական ս' փականութեան ոչնչացման մէջ:

Իսկ ժամանակակից բուրժուական մասնաւոր սեփականութիւնը կազմում է ապրանքների արտադրութեան և իւրացման վերջին, ամենակատարեալ արտայայտութիւնը, որն յենւում է դասակարգային հակադրութիւնների և մէկի

հարստութեան վրայ՝ միևսի միջոցով:

Այդ խմատով կօմոնիստները կարող են ձեռնարկել իրենց թէօրիան հեռեկալ նախադատութեան մէջ, անհատական սեփականութեան ոչնչացումն:

Մեզ, կօմոնիստներս, մեղադրում են, որ իբր մենք կամենում ենք ոչնչացնել անձամբ վաստակած, անձնական աշխատանքով ձեռք բերած սեփականութիւնը, այն սեփականութիւնը, որն ամեն անհատական ազատութեան, գործունէութեան և անկախութեան հիմքն է կազմում:

Անձամբ վաստակած, անձնական աշխատանքով ձեռք բերած սեփականութիւն: Արդեօք ձեր խօսքը մանր բուրժուական կամ մանր գիւղացիական սեփականութեան մասին է, որը նախորդել է բուրժուական սեփականութեանը. մենք կարիք չունենք ոչնչացնելու նրան.—արդիւնաբերութեան գարգացումը ոչնչացրել է և ոչնչացնում է նրան ամեն օր:

Կամ գուցէ դուք խօսում էք ժամանակակից բուրժուական մասնատր սեփականութեան մասին:

Բայց միթէ վարձու աշխատանքը, պրօլետարների աշխատանքը, սեփականութիւն է ստեղծում նրա համար: Ոչ մի դէպքում: Նա ստեղծում է կապիտալ, այսինքն մի սեփականութիւն, որը շահագործում է վարձու աշխատանքը և որը միայն այն դէպքում աճել կարող է, երբ նա նոր վարձու աշխատանք է արտադրում՝ նրան նորից շահագործելու համար: Սեփականութիւնն իր այժմեան ձևի մէջ չարժուում է կապիտալի և վարձու աշխատանքի մէջ տիրող հակադրութեան սահմանում: Քննենք այդ հակադրութեան երկու կողմերն էլ:

Կապիտալիստ լինել՝ նշանակում է ոչ միայն զուտ անձնական, այլ և հասարակական գիրք ունենալ արդիւնաբերութեան մէջ: Կապիտալը ընդհանրական արդիւնք է և կարող է գործի դնել միայն հասարակութեան շատ ան-

դամների ընդհանուր գործունէութեամբ, վերջին հաշուով, հասարակութեան բոլոր անդամների գործունէութեամբ:

Ուրեմն կապիտալը ոչ թէ անհատական, այլ հասարակական սթ է:

Եթէ ուրեմն կապիտալը զուտ ընդհանրական, հասարակութեան բոլոր անդամներին պատկանող սեփականութիւն, այն ժամանակ ոչ թէ անհատական սեփականութիւնը կփոխի հասարակականի, այլ միայն կփոխի սեփականութեան հասարակական բնուորութիւնը: Նա կկորցնի իր գասակարգային բնուորութիւնը:

Անցնենք վարձու աշխատանքին:

Վարձու աշխատանքի միջին գինը աշխատավարձի միջինումն է, այն գումարը կենսական պիտոյքների, որոնք անհրաժեշտ են՝ բանւորին իր բանւոր պահպանելու համար: Ուրեմն ինչ որ վարձու աշխատաւորը իւրացնում է իր գործունէութեամբ, բաւականանում է միայն նրա մերկ գոյութիւնը նորից շարունակելու համար:

Մենք ոչ մի դէպքում չենք կամենում վերացնել աշխատանքի արդիւնքների այդ անհատական իւրացումը, որը անհրաժեշտ է անմիջական կեանքի պահպանութեան համար և որը ոչ մի զուտ արդիւնք չի թողնում, որով կամար և որը ոչ մի զուտ արդիւնք չի թողնում, որով կարելի լինէր գնել օտարի աշխատանքը: Մենք կամենում ենք միայն ոչնչացնել այդ իւրացման աղքատիկ բնուորութիւնը երբ բանւորն ազրում է միայն կապիտալն աճեցնելու համար և միայն այնքան է ազրում, որքան նրա կեանքը շահաւէտ է տիրող գասակարգի համար:

Բուրժուական հասարակութեան մէջ կենդանի աշխատանքը միայն մի միջոց է՝ կուտակած աշխատանքը բազմապատկելու համար: Կօմոնիստական հասարակութեան մէջ կուտակած աշխատանքը միայն մի միջոց է՝ բանւորների կեանքը յարատեւելու, հարստացնելու և բարւոքելու համար:

Ուրեմն բուժուական հասարակութեան մէջ անցեալն իշխում է ներկայի վրայ, իսկ կոմունիստական հասարակութեան մէջ ներկան անցեալի վրայ: Բուրժուական հասարակութեան մէջ կապիտալն ինքնուրոյն է և անհատական, մինչդեռ գործօն անհատը ոչ ինքնուրոյն է և ոչ անհատական:

Եւ այդ յարաբերութեան ոչնչացումը բուրժուագիտականում է անհատականութեան և ազատութեան ոչնչացումն: Եւ իրաւացիօրէն: Անկասկած, գործը բուրժուային անհատականութեան, բուրժուայի ինքնուրոյնութեան և բուրժուայի ազատութեան ոչնչացման մէջ է:

Ներկայ բուրժուական արդիւնագործական պայմանների մէջ ազատութեան տակ հասկացում է ազատ առետուր, ազատ գնումն և վաճառումն:

Բայց եթէ ընկնում է մանրավաճառութիւնը, ընկնում է նաև ազատ մանրավաճառութիւնը: Ազատ մանրավաճառութեան պաշտպանութիւնը, ինչպէս և առհասարակ բուրժուական մեծահնչիւն ֆրադէները ազատութեան պաշտպանութեան մասին, այդ բոլորը միտք ունեն միայն կաշկանդած մանրավաճառի, Միջին Դարերի ճորտացած քաղաքացու վերաբերմամբ և ոչ թէ մանրավաճառութեան, բուրժուական արդիւնագործական պայմանների և նոյն իրեն, բուրժուադիւտայի, կոմունիստական ոչնչացման վերաբերմամբ:

Դուք սարոստուում էք նրանից, որ մենք կամենում ենք ոչնչացնել անհատական սեփականութիւնը: Բայց գոյութիւն ունեցող ձեր հասարակութեան իննդ-տասներորդականի համար նա ոչնչացած է: Նա գոյութիւն ունի հէնց այն պատճառով, որ այդ իննդ-տասներորդականի համար գոյութիւն չունի: Ուրեմն, դուք մեղադրում էք մեզ նրա մէջ, որ մենք կամենում ենք ոչնչացնել մի սեփականութիւն, որ գոյութեան անհրաժեշտ նախապայմանը հասարակութեան ահագին մեծամասնութեան սեփականադրկութիւնն է:

բակութեան ահագին մեծամասնութեան սեփականադրկութիւնն է:

Մի խօսքով, դուք մեղադրում էք մեզ նրա մէջ, որ մենք կամենում ենք ոչնչացնել ձեր սեփականութիւնը: Անկասկած, մենք կամենում ենք այդ:

Այն բոլորից, երբ աշխատանքն անկարող կլինի այլ ևս վերածել կապիտալի, դրամի, հողային հասոյթի, կարճ, մենավաճառի ենթարկած հասարակական ոյժի. այսինքն այն բոլորից, երբ անհատական սեփականութիւնը կզաղարէ այլ ևս փոխելու բուրժուական սեփականութեան, այդ բոլորից, յայտարարում էք դուք, մարդկային անհատը ոչնչացած կլինի:

Ուրեմն դուք խոստովանում էք, որ անհատի տակ դուք հասկանում էք միայն բուրժուային, բուրժուական սեփականատիրոջը: Անկասկած, այդ անձնաւորութիւնը ևս պէտք է ոչնչացի:

Կոմունիզմը չի զրկում ոչ ոքին հասարակական արդիւնքները իւրացնելու իրաւունքից, նա միայն թոյլ չի տալիս այդ իւրացման միջոցով հպատակեցնելու օտարի աշխատանքն:

Առաջարկում են, որ անհատական սեփականութեան ոչնչացումից յետոյ կզաղարէ ամեն գործունէութիւն և կրտիրէ ընդհանուր ծուլութիւն:

Ըստ դրա, բուրժուական հասարակութիւնը, իր անգործութեան շնորհիւ, վաղուց արդէն պէտք է խորտակւած լինէր, որովհետև նրանք, որոնք նրա մէջ աշխատում են, ոչինչ չեն վաստակում, իսկ նրանք, որոնք վաստակում են չեն աշխատում: Ամբողջ տարակուսանքը բղրում է հետեւեալ կրկնութիւնից. չկայ վարձու աշխատանք այնտեղ, ուր այլ ևս կապիտալ չկայ:

Բոլոր այն առարկութիւնները, որոնք ուղղւած են նիւթական արդիւնքների կոմունիստական իւրացման և

արդիւնաբերութեան դէմ, աւարածոււմ են նոյնպէս մտաւոր արգասիքները իւրացման և արտադրութեան վրայ: Ինչպէս որ դասակարգային սեփականութեան ոչնչացումը բուրժուայի համար նշանակոււմ է արդիւնաբերութեան ոչնչացումն, այնպէս էլ դասակարգային կրթութեան ոչնչացումն համազօր է նրա համար կրթութեան ոչնչացման առհասարակ:

Այն կրթութիւնը, որի կորուստը նա ափսոսոււմ է, ահագին մեծ քանակութեան համար մի ճանապարհ է դէպի մեքենացումն:

Քայց մի վիճէք մեզ հետ, քանի որ բուրժուական սեփականութեան ոչնչացման մասին դուք դատոււմ էք համաձայն ձեր բուրժուական հասկացողութիւնների, որ դուք ունէք ազատութեան, կրթութեան, իրաւունքի և այն մասին: Ձեր գաղափարներն իրենք արդիւնք են բուրժուական արդիւնագործական և սեփականատիրական յարաբերութիւնների, ինչպէս որ ձեր իրաւունքը ձեր դասակարգի օրէնքի վերածած կամքն է միայն, մի կամք, որի բովանդակութիւնը տւած է ձեր դասակարգի գոյութեան նիւթական պայմանների մէջ:

Այն աշառու գաղափարը, ըստ որի ձեր արդիւնագործական և սեփականատիրական յարաբերութիւնները դուք դարձրել էք պատմութեան և արդիւնագործութեան ընթացքում փոփոխող յարաբերութիւններից բնութեան և բանականութեան յաւիտենական օրէնք, այդ գաղափարը ընդհանուր է և բոլոր նախկին տիրապետող դասակարգերին: Այն, ինչ որ դուք բմբռնոււմ էք, անտիկ սեփականութեան և աւատական սեփականութեան նկատմամբ, դուք այդ չէք բմբռնոււմ այլ ևս բուրժուական սեփականութեան նկատմամբ:

Ընտանիքի՝ ոչնչացումն: Ամենաձայրայեղ արմատականներն անգամ վրդովոււմ են կօմունիստների այդ բստրմանի վիտաւորութիւնից:

Ինչի՞ վրայ է յենոււմ ժամանակակից բուրժուական ընտանիքը: Կապիտալի վրայ, մասնաւոր հարստացման վրայ: Կատարեալ զարգացած ձևով նա գոյութիւն ունի միայն բուրժուադիւայի համար. բայց նա գտնոււմ է իր լրացումը պրօլետարիների բուն ընտանեգրկութեան և հրատարակական պոռնկութեան մէջ:

Իր այն լրացման ոչնչացման հետ կոչնչանայ բնականորէն և բուրժուական ընտանիքը, իսկ կապիտալի ոչնչացման հետ զրանք երկուսն էլ կանհետանան:

Գոնցէ դուք մեղադրէք մեզ նրա մէջ, որ մենք կամենոււմ ենք ոչնչացնել երեխաների շահագործութիւնը իրենց ծնողների ձեռքով: Այո, մենք խոստովանոււմ ենք այդ յանցանքը:

Քայց, ասոււմ էք դուք, ընտանեկան կրթութիւնը հասարակականի փոխելով, մենք ոչնչացնոււմ ենք զըրանով ամենանւիրական յարաբերութիւնները:

Քայց մի՞թէ ձեր տւած կրթութիւնը ևս չի որոշոււմ հասարակութեամբ: Հասարակական յարաբերութիւններով, որոնց մէջ դուք կրթոււմ էք, հասարակութեան օւղղակի կամ անուղղակի միջամտութեամբ, դպրոցների կազմակերպութեամբ և այլն: Կօմունիստները չեն հնարել հասարակութեան միջամտութիւնը կրթութեան մէջ. նրանք փոխըմ են միայն այդ միջամտութեան բնաւորութիւնը, ազատելով նրան տիրող դասակարգի ազդեցութիւնից:

Բուրժուական ճոռումբանութիւնները ընտանիքի և կրթութեան, ծնողների և դաւակների նւիրական յարաբերութիւնների մասին այնքան աւելի զգելի են գտնոււմ, որքան աւելի խոշոր արդիւնաբերութեան զարգացման շնորհիւ քայքայոււմ են պրօլետարների բոլոր ընտանեկան կապերը, որքան աւելի բանւորների երեխաները գտնոււմ են առեւտրի հասարակ ապրանքներ, աշխատանքի գործիքներ:

Քայց դուք կօմունիստներդ կամենոււմ էք համայնակ-

նութիւն մտցնել, գոռում է մեր դէմ միաբերան ամբողջ բուրժուազիան:

Բուրժուան տեսնում է իր կնոջ մէջ միայն արդիւնաբերող գործիք: Նա լսել է, որ արդիւնաբերութեան գործիքները պէտք է շահագործւեն համայնօրէն և մտածում է, որ կանայք ևս չպիտի խուռափեն համայնացման վիճակից:

Նա չի էլ կասկածում, որ խնդիրն հէնց այն դրութեան վերացման մէջ է, երբ կանայք արդիւնաբերող գործիքներ են բացառապէս:

Իհարկէ, մեր բուրժուաների բարձր բարոյական սարսափը կօմունիստների կարծեցեալ պաշտօնական համայնակնութեան առաջ միայն ծիծաղի արժան կարող է լինել: Կօմունիստները կարիք չունեն համայնակնութիւն մըտցնելու—նա գրեթէ միշտ գոյութիւն է ունեցել:

Ձբաւկանանախով նրանով, որ իրենց պրօլետարիների կանայք և աղջիկները գտնուում են սեփական տրամագրութեան տակ—չենք խօսում դեռ պաշտօնական պողոնկութեան մասին—մեր բուրժուաները գտնում են գլխաւոր հաճոյքը իրենց ամուսիններին փոխադարձաբար հրապուրելու մէջ:

Իրականութեան մէջ բուրժուական ամուսնութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ համայնակնութիւն, Կօմունիստների ամենաշատը կարող են մեղադրել նրա մէջ. որ կեղծիքով քողարկած համայնակնութեան փոխարէն նրանք կամենում են մտցնել պաշտօնական, անկեղծ համայնակնութիւն:

Ինքնըստինքեան հասկանալի է իհարկէ, որ ներկայ արդիւնաբերական յարաբերութիւնների ոչնչացման հետ, կոչնչակայ նաև նրանցից առաջացող համայնակնութիւնը, այսինքն կանհետանայ պաշտօնական և ոչ պաշտօնական պողոնկութիւնը:

Յետայ, կօմունիստներին մեղադրում են նրա մէջ,

որ նրանք իբր թէ կամենում են ոչնչացնել հայրենիքը, ազգութիւնը:

Աշխատուորները հայրենիք չունեն: 2ի կարելի լսել նրանցից այն, ինչ որ նրանք չունեն: Քանի դեռ պրօլետարիատը ձգտէ նաճել քաղաքական իշխանութիւնը, հասնել ազգային դասակարգի ատիճանին և կազմակերպել ինքզինքն իբրև ազգ, այնքան դեռ նա կմնայ ազգային, թէպէտև ոչ մի դէպքում բուրժուազիայի իմաստով:

Ազգային սահմանափակութիւնը և ժողովրդի մէջ եղած հակադրութիւնները աւելի և աւելի են անհետանում արդէն իսկ բուրժուազիայի դարգացման, առեարի ազատութեան, համաշխարհային վաճառանոցի, ինդուստրիական արտադրութեան միակերպութեան և նրանց համապատասխան կենսական յարաբերութիւնների հետ:

Պրօլետարիատի տիրապետութիւնը դեռ աւելի կանհետացնէ նրան: Անուազն քաղաքակրթւած երկրների միացած գործունէութիւնը նրա ազատագրութեան առաջին պայմաններից մէկն է:

Այն շափով, որ շափով կոչնչանայ մի անհատի հարստահարութիւնը միւսի միջոցով, այդ շափով կոչնչանայ և մի ազգի հարստահարութիւնը մի այլ ազգի միջոցով:

Ազգութեան սահմանում գոյութիւն ունեցող դասակարգային հակադրութիւնների անկման հետ, կրնին և ազգերի փոխադարձ թշնամական վերաբերմունքը:

Ֆոլոր մեղադրանքները, որոնք ուղղւած են կօմունիստների դէմ կրօնական, փիլիսոփայական և իդէօլոգիական հայեցակէտներից, արժանի չեն աւելի մանրամասն քննութեան:

Միթէ չառ խորիմացութիւն է հարկաւոր հասկանալու, որ մարդկանց գոյութեան պայմանների, նրանց հասարակական յարաբերութիւնների, նրանց հասարակական գոյութեան հետ փոխուում են և նրանց հասկացողութիւն-

ները, հայեցողութիւնները, գաղափարները, մի խօսքով նրանց ամբողջ գիտակցութիւնը:

Ի՞նչ է պայցուցում գաղափարների պատմութիւնը, բայց եթէ ոչ այն, որ մտաւոր արտազրութիւնը փոխուում է նիւթական տրդիւնարեքութեան հետ: Մի սրիէ ժամանակի իշխող գաղափարները եղել են միշտ այդ ժամանակի տիրապետող դասակարգի գաղափարները:

Խօսում են գաղափարների մասին, որոնք յեղափոխում են մի ամբողջ հասարակութիւն. գրանով արտայայտում են միայն այն փաստը, որ հին հասարակութեան մէջ գոյացել են էլեմենտներ նոր հասարակութեան համար որ հին կենսակտն պայմանների կործանման հետ զուգընթացաբար կատարուում է և հին գաղափարների կործանումը:

Հին աշխարհի անկման պահին հին կրօնները յաղթաշարեցին բրիտանեական կրօնի կողմից: Երբ 18-րդ դարում քրիստոնէական գաղափարները տեղի տւին լուսաւոր գաղափարներին, աւատական հասարակութիւնը մղում էր իր մահան կռիւր այն ժամանակեայ յեղափոխական բուրժուազիայի դէմ: Խղճի և կրօնի աղատութեան գաղափարները արտայայտում էին միայն ազատ մրցութեան տիրապետութիւնը գիտութեան աշխարհում:

«Սակայն, կասեն մեզ, կրօնական, բարոյագիտական փիլիսոփայական, քաղաքական, իրաւական և այլ գաղափարները, փոխել են անտարակոյս սրտմական զարգացման ընթացքում: Իսկ կրօնը, բարոյագիտութիւնը, փիլիսոփայութիւնը, քաղաքականութիւնը, իրաւունքը այդ փոփոխութեան ընթացքի մէջ միշտ կայուն են մնացել:

«Յացի այդ, կան յաւիտենական ճշմարտութիւններ, ինչպէս աղատութիւնը, արդարութիւնը և այլն, որոնք ընդհանուր են բոլոր հասարակական դրութիւնների համար: Իսկ կօմունիզմը վերացնել է կամենում յաւիտենական

ճշմարտութիւնները. նա վերացնում է կրօնը, բարոյականութիւնը, փոխաբէն նրանց վերանորոգելու. ուրեմն, նա հակասում է մինչայժմեան ամբողջ պատմական զարգացմանը:»

Ինչի է յանգում այդ մեղադրանքը: Մինչայժմեան բոլոր հասարակութիւնների պատմութիւնը շարժել է դասակարգային հակադրութիւնների մէջ, որոնք արտայայտել են միայն զանազան պատմական շրջաններում տարբեր ձևերով: Ինչ ձևով էլ արտայայտէին այդ հակադրութիւնները, այնուամենայնիւ հասարակութեան մի մասի հարբատահարութիւնը միւսի միջոցով ընդհանուր փաստ է բոլոր անցեալ դարերի համար: Զարմանալի չէ ուրեմն, որ բոլոր դարերի ընթացքում հասարակական գիտակցութիւնը, չընայելով իր բոլոր բաղմօրինակութեանը և տարբերութեանը, շարժուում է միշտ որտէ ընդհանուր ձևերի մէջ, գիտակցութեան ձևերի, որոնք, կշքանան միանգամայն միայն դասակարգային հակադրութիւնների կատարեալ անհետացմամբ:

Կօմունիստական յեղափոխութիւնը խզում է ամենաարմատական կերպով հնից ժառանգած սեփականատիրական յարաբերութիւնների հետ. ուրեմն զարմանալի չէ, որ իր զարգացման ընթացքում նա խզելու է ամենաարմատական կերպով և ժառանգած գաղափարների հետ:

Բայց թողնենք բուրժուազիայի մեղադրանքները կօմունիզմի դէմ:

Վերը արդէն մենք տեսանք, որ բանւորների յեղափոխութեան մէջ առաջին քայլը լինելու է պրօլետարիատի բարձրացումը մինչև տիրող դասակարգի աստիճանը և ղեմօկրատիայի հաստատումը:

Պրօլետարիատը կօգտուի իր քաղաքական տիրապետութիւնից նրա համար, որպէսզի բայլ առ քայլ խլէ բուրժուազիայից նրա ամբողջ կապիտալը, կենտրոնացնէ ար-

գիւնագործութեան բոլոր գործիքները պետութեան, այսինքն իբրև իշխող դասակարգ կազմակերպւած պրօլետարիատի ձեռքում և ըստ կարելոյն արագ բազմապատկէ արգիւնագործական ոյժերը:

Սկզբում դա կարող է բնականաբար կատարել միայն բռնի միջամտութեամբ սեփականութեան իրաւունքի և բուրժուական արգիւնագործական յարաբերութիւնների մէջ, ուրեմն այնպիսի միջոցներով, որոնք անտեսապէս անբաւարար և խախտւած են թւում, բայց որոնք շարժման ընթացքում իրենք իրենց գերազանցում են և անխուսափելի են, իբրև միջոցներ, արգիւնագործութեան եղանակի յեղաշրջման համար:

Ձանազան երկրների համար այդ միջոցները, բնականաբար, պէտքէ տարբեր լինեն:

Սակայն ամենաքաղաքակիրթ երկրների համար կարող էին գրեթէ ընդհանուր գործադրութիւն գտնել հետեւեալ միջոցները.

1. Հողային սեփականութեան էքսպրօպրիացիան և հողային հասոյթի գործադրութիւնը պետական ծախքերի համար:

2. Ուժեղ պրօգրէսիւ-եկամտային հարկը:

3. Ժառանգութեան իրաւունքի ոչնչացումը:

4. Բոլոր դուրս գալթողների և խռովարարների սեփականութեան արքունագրաւումը:

5. Կրեդիտի կենտրոնացումը պետութեան ձեռքում՝ ազգային բանկի, պետական կապիտալի և լիախատար մեծաշնորհի միջոցով:

6. Փոխադրութեան միջոցների կենտրոնացումը պետութեան ձեռքում

7. Ազգային գործարանների և արգիւնաբերող գործիքների բազմացումը. բոլոր հողերի ուղղումը և մշակումը ընդհանուր նախագծով:

8. Հաւասարապէս սարատաղիր աշխատանք բոլորի համար. արգիւնաբերող գնտերի հաստատութիւնը, մանաւանդ երկրագործութեան համար:

9. Երկրագործական և արգիւնաբերական ձեւեր-կութիւնների միացումը. քաղաքի և գիւղի մէջ գոյութիւն ունեցող տարբերութիւնների վերացումը:

10. Բոլոր երեխաների համար ձրի և հասարակական կրթութիւն: Երեխաների գործարանական աշխատանքի ներկայ ձեւի ոչնչացումը: Կրթութեան և նիւթական արգիւնաբերութեան միացումը և այլն:

Երբ զարգացման ընթացքում դասակարգային տարբերութիւնները կանհետանան և արգիւնագործութիւնը կ'կենտրոնանայ միաւորւած անհատների ձեռքում, այն ժամանակ հասարակական իշխանութիւնը կ'կորցնի իր քաղաքական շնաւորութիւնը: Իր իսկական նշանակութեամբ, քաղաքական իշխանութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ մի դասակարգի կազմակերպւած իշխանութիւն՝ մի այլ դասակարգ ճնշելու համար: Երբ բուրժուազիալի ղէմ մղող կրոււի մէջ պրօլետարիատը անհրաժեշտաբար կազմակերպել իբրև դասակարգ, յեղափոխութեան միջոցով դարձնի ինքզինքն իշխող դասակարգ և՛ որպէս իշխող դասակարգ՝ բռնութեամբ ոչնչացնէ հին արգիւնագործական յարաբերութիւնները, նա այդ արգիւնագործական յարաբերութիւնների հետ կ'ոչնչացնէ և դասակարգային հակադրութիւնների գոյութեան նախապատճառները, դասակարգերն ընդհանրապէս և դրանով սեփական դասակարգի իշխանութիւնը:

Յին բուրժուական հասարակութեան փոխարէն, իր դասակարգերով և դասակարգային հակադրութիւններով, ասպարէզ կգայ մի ասօցիացիա, ուր իւրաքանչիւր անհատի ազատ զարգացումը կկազմի բոլորի զարգացման անհրաժեշտ նախապայմանը:

III.

ՍՕՅԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵՒ ԿՕՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԳԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

1) Յեճադիմական սօցիալիզմ:

ա) Ֆեօդալական սօցիալիզմ:

Փրանսիական և անգլիական ազնւականութիւնը՝ ըստ իր պատմական գրութեան, կոչւած էր պարսաւագիրներ սարքելու ժամանակակից բուրժուական հասարակութեան դէմ: 1830 թւականի յուլիսեան ֆրանսիական յեղափոխութեան, ինչպէս և անգլիական շարժման ժամանակ՝ ի նըպաստ պարլամենտական ըէֆօրմների, նա մի անգամ ևս յաղթել է իր համար ասեղի դարձած այդ նորեկի ձեռքից: Լուրջ քաղաքական կռիւ մասին այլ ևս խօսք չէր կարող լինել: Նրա համար մնում էր միայն գրականական կռիւր: Բայց գրականութեան ասպարիզում ևս անհնարին էին դարձել վերահաստատութեան ժամանակի հին ճոռոմարնութիւնները: Համակրութիւն ձեռք բերելու համար ազնւականութիւնը պէտքէ արտաքուստ աչքաթող անէր իր սեփական շահերը և կազմէր իր ամբաստանագիրը բուրժուազիայի դէմ միայն շահագործող բանուր դասակարգի շահերի անունից: Նա մեծ դարձութիւն էր զգում մըմընջալու իր նոր տիրոջ ականջին նախատինքի երգեր և շատ թէ քիչ աղէտալի մարգարէութիւններ:

Այդպիսով ծագեց աւատական սօցիալիզմը. կէս մըրմունջ, կէս պատկերի, կէս անցեալի արձագանք, կէս սպառնալիք ապագային. սօցիալիզմ, որը մերթ ընդ մերթ շանթում էր բուրժուազիային իր կծու, ուժեղ ու սրամիտ դատողութեամբ, բայց որը իր անընդունակութեամբ՝ ըմբռնե-

լու նորագոյն պատմութեան ընթացքը, միշտ ծիծաղաշարժ է միայն:

Պրօլետարիաւի մուրացկանական մախաղը նրանք ճօճում էին իրենց ձեռքում իբրև գրօշակ, որպէսզի ժողովուրդը իրենց շուրջը խմբեն: Բայց հետեւելով նրանց, ժողովուրդը խիզոյն նշմարում էր նրանց մէջըին աւանդական ֆէօդալական զինանշանները և անպատկառ քրքրջով դէպի ամեն կողմ ցրում:

Փրանսիական օրինաւորականների մի մասը և երիտասարդ Անգլիան ամենից լաւ խաղացին այդ կատակերգութիւնը:

Երբ ֆէօդալներն ապացուցում են, որ իրենց շահագործութեան եղանակը տարբեր է եղել բուրժուական շահագործութեան եղանակից, նրանք մոռանում են, որ իրենք շահագործել են բոլորովին տարբեր և այժմ արդէն հնացած հանգամանքների և պայմանների մէջ: Երբ նրանք ապացուցում են, որ իրենց տիրապետութեան տակ ժամանակակից պրօլետարիաւը գոյութիւն չունէր, նրանք մոռանում են, որ հէնց ժամանակակից բուրժուազիան մի անհրաժեշտ սրգատիք էր իրենց հասարակական կազմի:

Բայց նրանք այնքան էլ չեն ծածկում իրենց քըննագատութեան յետադէմ ընաւորութիւնը. նրանց գլխաւոր մեղադրանքը բուրժուազիայի դէմ կայանում է նրանում, որ բուրժուազիայի ուէժիմի տակ զարգանում է մի դասակարգ, որը պիտի օղբ ցնդեցնէ հին հասարակութիւնը:

Նրանք յանդիմանում են բուրժուազիային պիտուրապէս ոչ այն պատճառով, որ նա պրօլետարիատ է ստեղծում առհասարակ, այլ այն պատճառով, որ նա յեղափոխական պրօլետարիատ է ստեղծում:

Ուստի գործնական քաղաքականութեան մէջ նրանք մասնակցում են բանուր դասակարգի դէմ ուղղած բոլոր բռնութիւններին, իսկ առօրեայ կեանքում, չնայելով իրենց

բոլոր մեծահնչիւն շատարանութիւններին, մի բողէ անգամ չեն մտանում անձնական շահը և սիրոյ, հաւատարմութեան ու պատի գաղափարները փոխարինում են բրդի, ճակնդեղի և արագի հետ:

Ինչպէս ակրաքը առաջ էր գնում միշտ ձեռք ձեռքի տաւած ֆէօդալի հետ, այնպէս էլ կղերի սօցիալիզմը ֆէօդալների սօցիալիզմի հետ:

Ի՞նչն է աւելի հեշտ, քան քրիստոնէական ասկետութեանը սօցիալիստական գոյն տալը: Մի՞թէ քրիստոնէութիւնը չէր բողոքում մասնաւոր սեփականութեան, ամուսնութեան և պետութեան դէմ: Մի՞թէ գրանց տեղ նա չէր քարոզում բարեգործութիւն և մուրացկանութիւն, ամուրիութիւն և մարմնի մահացումն, անտպատական կեանք և եկեղեցի: Քրիստոնէական սօցիալիզմը ոչ այլ ինչ է, բայց եթէ սուրը ջուր, որով տէրաէրն օրհնում է աղնականի դայրոյթը:

բ) Մանր բուրժուական սօցիալիզմ:

Աւատական աղնականութիւնը միակ դասակարգը չէ, որին ապալեց բուրժուազիան և որի գոյութեան նախապայմանները վնասում ու մեռնում են ժամանակակից բուրժուական հասարակութեան մէջ: Միջնադարեան քաղաքացիութիւնը և մանր գիւղացիութեան դասը ժամանակակից բուրժուազիայի նախորդներն էին: Արգինարեութեան և առևտրի տեսակէտից թոյլ զարգացած երկրներում այդ դասակարգը զեռ քարչ է տալիս իր գոյութիւնը առաջադիմող բուրժուազիայի կողքին:

Այն երկրներում, ուր զարգացել է ժամանակակից քաղաքակրթութիւնը, առաջ է եկել— և որպէս բուրժուական հասարակութեան լրացուցիչ մասը, միշտ նորից ծրնունդ է առնում— մի նոր մանր բուրժուազիա, որը տա-

լուրերում է պրօլետարիատի և բուրժուազիայի մէջ և որի անդամները, մրցութեան շնորհիւ, նետում են անդադար պրօլետարիատի շարքերը և նկատում, որ խոշոր արդիւնաբերութեան զարգացման հետ միասին մօտենում է այն ժամանակը, երբ իրենք, որպէս ինքնուրոյն մասը ժամանակակից հասարակութեան, կանհետանան միանգամայն և կփոխարինեն առևտրի, մանուֆակտուրայի և երկրագործութեան մէջ վերակացուներով ու ծառայողներով:

Փրանսիայի նման երկրներում, ուր գիւղական դասակարգը կազմում է ազգարնակութեան աւելի քան կէսը, բնական էր, որ պրօլետարիատի շահերը պաշտպանող գրողները պէտք է քննադատէին բուրժուական կազմը մանր բուրժուական և մանր գիւղացիական տեսակետից և նոյն այդ մանր բուրժուական տեսակէտից պէտք է յարձակէին բանւորների կուսակցութեան վրայ: Այդպէս ծագեց մանր բուրժուական սօցիալիզմը: Այդ գրականութեան պարագլուխը Միսմօնդին է, ոչ միայն Փրանսիայում, այլ և Անգլիայում:

Այդ սօցիալիզմը վերլուծեց ծայրահեղ սրամտութեամբ ժամանակակից արդիւնագործական յարաբերութիւնների հակառակութիւնները: Նա մերկացրեց անտեսագէտների կեղծաւոր լատեսութիւնը: Նա ապացուցեց անհերքելի կիրպով մեքենայական արգիւնագործութեան և աշխատանքի բաժանման քայքայիչ հետեանքները, կոպիտաւորների և հողային սեփականութեան կենտրոնացումը, պերարագրութիւնը, ճգնաժամերը, մանր բուրժուաների և գիւղացիների անխուսափելի անկումը, պրօլետարիատի թշուառութիւնը, արգիւնարեութեան մէջ տիրող անիշխանութիւնը, հարստութեան բաժանման մէջ տիրող հրէշաւոր անարդարութիւնները, աղքերի փոխադարձ ինդուստրիական աւերիչ պատերազմները, հին սովորութիւնների, հին

ընտանեկան յարաբերութիւնները և հին ազգութիւններէ քայքայումը:

Սակայն ըստ իր զրական բովանդակութեան, այդ սօցիալիզմը կամենում է կամ վերահաստատել արդիւնագործութեան և հաղորդակցութեան հին միջոցները և զրանց հետ հին սեփականատիրական յարաբերութիւնները և հին հասարակութիւնը, կամ թէ նա կամենում է նորից սեղմել զօրով արդիւնագործութեան և հաղորդակցութեան ժամանակակից միջոցները հին սեփականատիրական յարաբերութիւնների սահմանների մէջ, սահմանների, որոնց այդ միջոցները խորտակել էին, որոնց նրանք պէտք է խորտակէին: Երկու դէպքում էլ նա յետագէմ և միաժամանակ ուսուպիստական է:

Համբարական կազմ մանուֆակտուրայի մէջ և նահապեական գիւղատնտեսութիւն—ահաւասիկ նրա վերջին խօսքը:

Իր յետագայ զարգացման մէջ այդ ուղղութիւնը դարձաւ մի աղիողորմ բողբոջ:

գ) Գերմանական կամ «իսկական» սօցիալիզմ⁶⁾

Ֆրանսիայի սօցիալիստական և կօմունիստական գրականութիւնը, որ ծնունդ է առել իշխող բուրժուազիայի ճնշման տակ և այդ իշխանութեան դէմ ուղղած կռիւ գրականական արտայայտութիւնն է կազմում, ներմուծեց

⁶⁾ Յիշեցնում ենք ընթերցողին, որ սօցիալիստական գրականութեան ընդհանուր Մանիֆէստի մէջ նշանում է միայն մինչև 1847 թիւը: Ուստի այն բոլորը, ինչ որ ասում է այս վերնագրի տակ «գերմանական» սօցիալիզմի մասին, ոչ մի կերպով չի վերաբերում այժմեան գերմանական սօցիալիզմօկրատիային:

Մ. Մ.

Գերմանիա այն ժամանակ, երբ տեղական բուրժուազիան նոր էր սկսել իր կոխը աւատական ինքնակալութեան դէմ:

Գերմանական փիլիսոփաները, կէս-փիլիսոփաները և իմաստագէտները սկսեցին յափշտակութեամբ ուսումնասիրել այդ գրականութիւնը, մտանալով միայն, որ ֆրանսիական գրականութեան հետ միաժամանակ ֆրանսիայի կենսական պայմանները չեն տեղափոխւել Գերմանիա: Գերմանական պայմանների հանդէպ, ֆրանսիական գրականութիւնը կորցրեց ամեն մի անմիջական գործնական նըշանակութիւն և ընդունեց զուտ գրականական բնուորութիւն: Այստեղ նա արտայայտեց իբրև մի պարապ տեսութիւն մարդկային ճշմարիտ բնութեան մասին: Այդպէս, ֆրանսիական առաջին յեղափոխութեան պահանջները 18-դ դարի գերմանական փիլիսոփաների համար միտք ունէին միայն, որպէս պահանջներ ընդհանուր «գործնական» բանականութեան, իսկ ֆրանսիական յեղափոխական բուրժուազիայի ձգումները ներկայանում էին նրանց, որպէս «մաքուր կամքի» օրէնքներ, իսկական մարդկային կամքի, ինչպէս նա պէտք է լինի:

Գերմանական գրական գործիչների միակ աշխատանքը կայանում է նրանում՝ համաձայնեցնել ֆրանսիական նոր գաղափարները իրենց հին փիլիսոփայական գաւառանքի հետ, կամ, աւելի ճիշտ, մնալով իրենց փիլիսոփայական հայեցակէտի վրայ, իւրացնել ֆրանսիական գաղափարները:

Այդ իւրացումը կատարեց նոյն ձևով, ինչ ձևով ահասարակ կատարում է որևիցէ օտար լեզուի իւրացումն, այսինքն թարգմանութեամբ:

Յայտնի է, որ հին կապալաշտական աշխարհի կլասիքական երկերը պարունակող ձեռագրերի սկզբին վարդապետները գրոտում էին անհամ պատուածքներ կաթօրիկ սրբերի մասին: Գերմանական գրական գործիչները վար-

ւում էին ֆրանսիական զբաղանութեան հետ միանգամայն հակառակը: Նրանք զնում էին իրենց փիլիսոփայական դատարկարանութիւնները ֆրանսիական բնագրից յետոյ: Յրինակ, փողոյին անասութեան ֆրանսիական բնագատութեան յետև նրանք զնում էին «մարդկային ճշմարիտ բնութեան օտարացումն», բուրժուական պետութեան ֆրանսիական քննադատութեան յետև՝ «խրացական Ընդհանուրի տիրապետութեան սշնչացումն» և այլն:

Ֆրանսիական իրականութեան վերածումն այդ տեսակ փիլիսոփայական ֆրագաբանութիւնների մկրտելի է նրանց կողմից՝ իբրև «գործի փիլիսոփայութիւն», «Իսկական Սօցիալիզմ», «Սօցիալիզմի Գերմանական գիտութիւն», «Սօցիալիզմի փիլիսոփայական հիմնաւորումն» և այլն:

Ֆրանսիական սօցիալիստական և կոմունիստական զբաղանութունը կորցրել էր իր լուրջ բնաւորութիւնը: Եւ որովհետև գերմանացու ձեռքում նա զաղարկել էր արտայայտելու մի դատակարարի կռիւր միւտի ղէմ, ուստի գերմանացին և կաւ այն եղբակացութեան, որ նա կոչւած է լրացնելու «ֆրանսիական միակողմանիութիւնը» և արտայայտելու ճշմարիտ կարիքների տեղ ճշմարտութեան կարիքը, պրօլետարիատի շահերէ տեղ մարդկային կութեան շահերը, մարդու ընդհանրապէս, որը ոչ մի զգասկարգի, որը առհասարակ ոչ թէ իրականութեանը, այլ փիլիսոփայական երևակաութեան մշտապատ եթերին է պահանջում:

Գերմանական այդ սօցիալիզմը, որ այդպէս լուրջ և հանդիսաւոր կերպով պոռում էր իր անտաշ դպրոցական վարժութիւնների մասին, ժամանակի ընթացքում կամացկամաց կորցրեց իր պեղանտական անմեղութիւնը:

Գերմանական և մանաւանդ պրուսական բուրժուազիայի կռիւր աւատների և ինքնակալ միապետութեան ղէմ, մի խօսքով, ազատամիտ շարժումն հետզհետէ լուրջ բնաւորութիւն ընդունեց:

«Իսկական» սօցիալիզմին ներկայացաւ այդպիսով մի ցանկալի դիպւած՝ հակադրելու սօցիալիստական պահանջները քաղաքական շարժումին, աւանդական անէմփրիկ կարգալու լիբերալիզմի, ներկայացուցչական պետութեան բուրժուական մրցութեան, մամուլի բուրժուական ազատութեան, բուրժուական իրաւունքի, բուրժուական ազատութեան և հաւատարմութեան հասցէին և քարոզելու ժողովրդին, որ բուրժուական այդ շարժումից նա օգտուելու ոչինչ չունի և ենթարկւում է ամեն բան կարցնելու վտանգին: Գերմանական սօցիալիզմը մտացել էր ժամանակին որ ֆրանսիական քննադատութիւնը, որի անմիտ արձագանքն էր ինքը, ինկատի ունի ժամանակակից բուրժուական հասարակութիւնը՝ իրեն համարատախան նիւթական պայմաններով և քաղաքական սահմանադրութեամբ, այսինքն այնպիսի նախապայմաններ, որոնց նւաճումն օրայ խնդիրն էր Գերմանիայի համար:

Այդ սօցիալիզմը ծառայում էր գերմանական ինքնակալ կառավարութիւններին, սրանց շրճապատող տէրաէրների, դպրոցական վարպետների, կալաածատէրերի և բուրժուականների հետ, իբրև մի ցանկալի խրուիլակ՝ սպառնօրէն առաջ ընթացող բուրժուազիայի ղէմ:

Նա կազմում էր մի քաղցր լրացումն մտրակային հարւածների և հրացանի զնդակների, որոնց միջոցով նոյն կառավարութիւնները պատասխանում էին գերմանական բանւորների ապստամբութիւններին:

Եթէ «Իսկական» սօցիալիզմը մի ղէնք էր կառավարութիւնների ձեռքում գերմանական բուրժուազիայի ղէմ, միևնոյն ժամանակ նա արտայայտում էր անմիջապէս մի յետադէմ շահ—գերմանական մանր բուրժուանների շահը: Մանր բուրժուազիան, որը սկսած 16-դ դարից գոյութիւն ունի գերմանիայում և զանազան ձևերի տակ միշտ նորից երևան է գալիս այդտեղ, կազմում է Գերմանիայում գո-

յութիւն ունեցող կարգերի իսկական հասարակական հիմքը: Նրա պահպանումը՝ պահպանումն է ներկայումս գոյութիւն ունեցող գերմանական կարգերի: Նա սոսկում է բուրժուազիայի արգիւնաբերական և քաղաքական տիրապետութիւնից, քաջ իմանալով, որ այդ տիրապետութիւնը մի կողմից կապիտալի կենտրոնացման և միւս կողմից յեղափոխական պրօլետարիատի զարգացման միջոցով իրեն անդունդ պիտի գլորէ: Նրան թուում էր, թէ «իսկական» սօցիալիզմը ընդունակ է մի գնդակով երկու նպատակ սպանելու: Եւ «իսկական» սօցիալիզմը տարածւում էր համաճարակի նման:

Այդ ծածկոյթը, որ գործւած էր մտադննութեան անպատու օտարանից, զարգարւած պերճախօս ճոռոմարանութիւնների ծաղիկներով և թրջւած հիացման արտասուքներով, այդ քնքոյշ ծածկոյթը, որի մէջ գերմանական սօցիալիստները քօղարկում էին իրենց մի ջուխտ ոսկրացած «յախտնական ճշմարտութիւնները», նպաստում էր միայն նրանց ապրանքների արագ տարածման այգպիսի մի հասարակութեան մէջ:

Գերմանական սօցիալիզմը իր կողմից միշտ աւելի և աւելի էր զգում իր կոչումը — այդ մանր բուրժուաների մեծագօր պաշտպանը լինելու:

Նա յայտարարեց գերմանական ազգը իրրև նօրմալ ազգ, իսկ գերմանացի մանր բուրժուային իրրև նօրմալ մարդ: Վերջինիս ամեն մի ստորութեան մէջ նա տեսնում էր մի թագնւած, խոր սօցիալիստական իմաստ, որի մէջ այդ ստորութիւնը ստանում էր իր հակառակ նշանակութիւնը: Յաջորդաբար այգպէս շարունակելով, նա յարձակեց բացարձակ կերպով կօմունիզմի «վայրենի, աւերիչ» ուղղութեան գէմ և յայտարարեց իրեն ամեն զասակարգային կախնելից բարձր: Քիչ բացառութեամբ, Գերմանիայում տարածւած բոլոր սօցիալիստական և կօմունիստական զըր-

ւածքները պատկանում էին այդ կեզտօտ և ջլատիչ դրականութեանը: ⁷⁾

2) Պահպանողական կամ բուրժուական սօցիալիզմ:

Բուրժուազիայի մի մասը ձգտում է դարմանել սօցիալական թշուաութիւնները՝ բուրժուական հասարակութեան գոյութիւնը ապահովեցնելու համար:

Այդ կարգին պատկանում են. անտեսագէտները, ֆիլանտրօպները, մարդատէրները, բանոր դասակարգի դրութիւնը բարոքել ցանկացողները, բարեգործութիւն կազմակերպողները, անասուններին հովանաւորողները, ժուկայութեան ընկերութիւնների հիմնադիրները և բազմատեսակ թղուկ ըէֆօրմատօրները: Այդ բուրժուական սօցիալիզմը մինչև իսկ ամբողջ սիստեմներ է ստեղծել:

Իրրև օրինակ յիշենք Պրուգօնի «Philosophie de la Misère»:

Սօցիալիստական բուրժուաները ցանկանում են ժամանակակից հասարակութեան գոյութեան պայմանները, առանց նրանցից անհրաժեշտօրէն առաջացող կոխների և վտանգների: Նրանք ցանկանում են գոյութիւն ունեցող հասարակութիւնը, առանց նրա յեղափոխիչ և քաջբայող տարրերի: Նրանք ցանկանում են բուրժուազիա, առանց պրօլետարիատի: Հասկանալի է, որ այն աշխարհը, որի մէջ իշխում է բուրժուազիան, թուում է նրանց իրրև ամենալաւ աշխարհը: Այդ միթիթարական երևակայութիւնից

⁷⁾ 1848 Թականի յեղափոխական մրրիկը արմատախիլ արաւ այդ գծու ուղղութիւնը և խլեց նրա ներկայացուցիչներից սօցիալիզմով դրարուլու ամեն մի եռանդ: Այդ ուղղութեան զխաւոր ներկայացուցիչը և կլասիքական տիպարն է Կարլ Գրիւնը:

բուրժուական սօցիալիզմը մշակել է մի կիսատ կամ կատարեալ սիստեմ: Եթէ նա պահանջում է պրօլետարիատից իրագործել իր սիստեմները և մանկ այդ ճանապարհով նոր Երուսաղեմ, զբանով իսկապէս նա միայն պահանջում է, որ պրօլետարիատն ապրէ ներկայ հասարակութեան մէջ, առանց նրան ասելու:

Այդ սօցիալիզմի մի երկրորդ տեսակը, որը աւելի գործնական է քան սիստեմատիկական, աշխատում է հետու պահել բանւոր դասակարգը ամեն յեղափոխական շարժումից, ապացուցելով, որ ոչ թէ այս կամ այն քաղաքական փոփոխութիւնը, այլ միայն գոյութեան նիւթական պայմանների և անտեսական յարաբերութիւնների փոփոխութիւնը կարող է օգուտ բերել բանւոր դասակարգին: Փոյութեան նիւթական պայմանների փոփոխութիւն ասելով, այդ սօցիալիզմը հասկանում է ոչ թէ բուրժուական արդիւնաբերական պայմանների ոչնչացումն, որը միայն յեղափոխական ճանապարհով է հնարուող, այլ վարչական բարեփոխումներ, որոնք պէտք է կատարեն այդ արդիւնաբերութեան պայմանների հողի վրայ և հետևապէս ոչ մի փոփոխութիւն չեն մտցնում կապիտալի և վարձու աշխատանքի յարաբերութեան մէջ, այլ լաւագոյն դէպքում պակասեցնում են բուրժուազիայի համար նրա իշխանութեան ծախքերը և հասարակացնում նրա պետական անտեսութիւնը:

Բուրժուական սօցիալիզմը գտնում է իր համապատասխան արտայայտութիւնը միայն այն ժամանակ, երբ նա դառնում է լոկ հետադարձական ձև:

Ազատ առևտուր—յօգուտ բանւոր դասակարգի: Հովանաւորող մաքսեր—յօգուտ բանւոր դասակարգի: Մենաւոր բանտարկութիւն—յօգուտ բանւոր դասակարգի: Սա է բուրժուական սօցիալիզմի վերջին և միակ լուրջ արտասանած խօսքը:

Բուրժուազիայի սօցիալիզմը կայանում է ուղղակի այն անդումի մէջ, որ բուրժուան դարձել է բուրժուա՝ յօգուտ բանւոր դասակարգի:

3) *Քննադատական-ուսույիսական սօցիալիզմ* *և կոմունիզմ:*

Այստեղ մենք չենք խօսում այն գրականութեան մասին, որը արտայայտում էր բոլոր մեծ ժամանակակից յեղափոխութիւնների մէջ պրօլետարիատի պահանջները:

Պրօլետարիատի առաջին փորձերը՝ ընդհանուր յուղման մի այդպիսի ժամանակ, սուտական հասարակութեան տապալման ընթացքում, անմիջապէս իրականացնելու իր դասակարգային ինտերեսը, անհրաժեշտաբար պէտք է վերբերէին թէ շնորհիւ իր, պրօլետարիատի, անզարգացած դրութեան և թէ նրա ազատագրութեան նիւթական պայմանների պակասութեան, պայմանների, որոնք արգասիք են հէնց բուրժուական դարեշրջանի: Այն յեղափոխական գրականութիւնը, որը ուղեկցում էր պրօլետարիատի այդ առաջին շարժումները, իր բովանդակութեամբ անհրաժեշտ յիտադիմական էր: Նա քարոզում էր ընդհանուր ասկերութիւն և բիրտ հաւասարութեան հաստատումն:

Իսկական սօցիալիստական և կոմունիստական սիստեմները՝ Սէն-Սիմօնի, Փուրիէի, Օվէի և ուրիշների սիստեմները երևան են եկել պրօլետարիատի և բուրժուազիայի կուլի առաջին անդարգացած շրջանում, որը մենք ներկայացրել ենք վերևում (տես «բուրժուաներ և պրօլետարներ» գլուխը):

Այդ սիստեմների հեղինակները տեսնում էին դասակարգերի միջև գոյութիւն ունեցող հակադրութիւնը, ինչպէս և իշխող հասարակութեան մէջ եղած և նրանք քայքայող տարրերի ազդեցութիւնը: Բայց նրանք չէին տես-

նում պրօլետարիատի մէջ ոչ մի պատմական ինքնուրոյնութիւն, նրան յատուկ ոչ մի քաղաքական շարժում:

Որովհետեւ դասակարգային հակադրութիւնների զարգացումն առաջ է գնում նոյն քայլերով, ինչ որ և արդիւնաբերութեան դարգացումը, ուստի նրանք չէին կարողանում գտնել պրօլետարիատի ազատագրութեան նիւթական պայմանները և փորձում էին ձեռք բերել այդ պայմանները սօցիալական գիտութեան և սօցիալական օրէնքների գիտի միջոցով:

Հասարակական գործունէութեան տեղը պէտք է բռնէր նրանց անձնական հնարչական գործունէութիւնը, ազատագրութեան պատմական պայմանների տեղը պէտք է բռնէին երեակայական պայմանները, պրօլետարիատի ինքնաբերաբար առաջ ընթացող դասակարգային տեղը՝ նրանց ծրագրով կազմած հասարակական կազմակերպութիւնը: Գալիք համաշխարային պատմութիւնը վճռում է նրանց համար պրօպագանդայի և իրենց հասարակական ծրագիրների գործնական իրականացման միջոցով:

Նրանք համոզուած են, որ իրենց ծրագիրներով պաշտպանում են գլխաւորապէս բանուր դասակարգի շահը՝ իբրև ամենից շատ տառապող դասակարգի: Եւ միայն այդ ամենից շատ առաւաղող դասակարգի տեսակէտից դոյութիւն ունի նրանց համար պրօլետարիատը:

Դասակարգային կռիւ անզարգացած ձեւը, ինչպէս և անձնական կենսական դրութիւնը կարծել են տալիս նրանց, որ իրենք կանգնած են այդ դասակարգային հակադրութիւններից բարձր: Նրանք կամենում են բարւոքել հասարակութիւնների բոյսը՝ նոյնպէս և ամենալաւ դրած, անգամների կենսական դրութիւնը: Այդ պատճառով նրանք անընդհատ գիտում են, առանց խտրութեան, ամբողջ հասարակութեանը, մինչև անգամ առաւելապէս իշխող դասակարգին: Հարկաւոր է միայն ըմբռնել նրանց սխտէմը,

որպէսզի կարելի լինի ընդունել նրան՝ իբրև լաւագոյն ծրագիր լաւագոյն հասարակական կազմի:

Այդ պատճառով նրանք հերքում են ամեն քաղաքական, այսինքն ամեն յեղափոխական գործունէութիւն. նրանք կամենում են հասնել իրենց նպատակին խաղաղ ճանապարհով և փորձում են փոքրիկ, բնականաբար անաջող փորձերով, օրինակների գօրութեամբ, ճանապարհ բաց տնել նոր հասարակական աւետարանի համար:

Ապագայ հասարակութեան երեակայական նկարագրութիւնը ծնունդ առաւ մի այնպիսի ժամանակ, երբ պրօլետարիատը դեռ զարգացած չէր, երբ նա պատկերացնում էր հետեւապէս իր սեփական դրութիւնը միանգամայն երեակայական գոյներով, որոնք համապատասխանում են պրօլետարիատի առաջին բնագրական ձգտմանը՝ միանգամայն յեղաշրջելու հասարակութիւնը:

Այդ սօցիալիստական և կօմունիստական գրածօրները պարունակում են իրենց մէջ և քննադատական տարրեր: Նրանք յարձակում են գոյութիւն ունեցող հասարակութեան բոյսը հիմքերի վրայ: Այդ պատճառով նրանք պարունակում են իրենց մէջ մի վերին աստիճանի թանգագին նիւթ՝ բանուրներին յուսաւորելու համար: Նրանց դրական դրութիւններն ապագայ հասարակութեան վերաբերեալ օրինակ քաղաքի և գիւղի միջև եղած հակադրութեան, ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և վարձու աշխատանքի վերացումը, հասարակական ներդաշնակութեան յայտարարումը, պետութեան վերածումն յիւ արդիւնագործական վարչութեան, — բոյսը այդ դրութիւնները արտայայտում են միայն դասակարգերի հակադրութեան ոչընչացումը, ոչը հազիւ նոր էր սկսում զարգանալ և որը ծանօթ էր նրանց իր առաջին սօցիալիստական անորոշութեան մէջ: Ուստի այդ դրութիւններն իսկ կրում են պեռ մարուր սոցիալիստական բնաւորութիւն:

Քրիստոսական-ուսուցիչական սօցիալիզմի և կոմունիզմի նշանակութիւնը գտնուում է պատմական զարգացման ընթացքի հեռանկարային յարաբերութեան մէջ: Քանի աւելի է զարգանում և ծաւալում դասակարգային կռիւլը, այնքան աւելի է այդ երեակայական ձգտումը՝ իննել բարձր դասակարգային կռիւց, այդ ֆանտաստիկական մաքառումը նրա դէմ, կորցնում ամեն գործնական արժէքը, ամեն տեսական արդարացումն: Եթէ, այդ պատճառով, այդ սիստէմների հիմնադիրները շատ կողմերից յեղափոխական էին, նրանց աշակերտներն ամեն անգամ ներկայացնում են յետադէմ ազանդներ: Նրանք խստօրէն դաւանում են վարպետների հին հայեացքները, առանց ինկատի առնելու պրօլետարիատի յետագայ պատմական զարգացումը: Այդ պատճառով նրանք նորից ճգնում են մեղմացնել դասակարգային կռիւլը և անհետացնել հակադրութիւնները: Նրանք դեռ շարունակ երազում են իրականացնել, օրինակի համար, իրենց հասարակական ուսուցիչները- հիմնել առանձին «ֆուլանստերներ», ներքին զազութիւնը (Home Kolonien) հաստատել մի փոքրիկ «Իկարիա»⁸⁾—նոր երուսաղէմի այդ գրպանի հրատարակութիւնը: Եւ բոլոր այդ օղային ամբողջների կառուցման համար նրանք պէտք է դիմեն բուրժուական սրտերի և փողի քսակների մարդասիրութեանը: Կամաց-կամաց նրանք ընկնում են վերը նկարագրած յետադիմական և պահպանողական սեցիալիստների շարքերը և տարբերում են նրանցից միայն իրենց սիստէմատիկական իմաստաբանութեամբ ու մոլեռանդ հաւա-

⁸⁾ «Ֆայանստեր» կոչում էին Ֆուրիէրի ծրագրած հասարակական պալատները: Home Kolonien անանում է Օլէնը իր օրինակելի կոմունիստական հասարակութիւնները: «Իկարիա» էր կոչում այն երեակայական ուսուցիչական աշխարհը, որի կոմունիստական հիմնարկութիւնները նկարագրել է Կարէն:

տով դէպի իրենց սօցիալական գիտութեան հրաշագործութիւնները:

Ահա թէ ինչու նրանք այդպէս զայրացած դիմադրում են բանւորների ամեն մի քաղաքական շարժումին, որը նրանց կարծիքով կարող է միայն առաջ գալ շնորհիւ կոյր անհաւատութեան դէպի այդ նոր աւետարանը:

Օլէնիստները Անգլիայում, Ֆուրիէրիստները Ֆրանսիայում՝ այնտեղ մաքառում են շարտիստների, այստեղ ընտրողական բէֆօրմի կողմնակիցների դէմ:

IV.

ԿՕՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆԻԲԸ ԴԷՊԻ ՉԱՆԱԶԱՆ ԴԻՄԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Այն ամենից յետոյ, ինչ որ ասած է երկրորդ գլուխում, կոմունիստների վերաբերմունքը դէպի արդէն գոյութիւն ունեցող զանազան բանւորական կազմակերպութիւնները ինքնընտրեան հասկանալի է. ուրեմն պարզ է ներանց վերաբերմունքը դէպի շարտիստներն Անգլիայում և հողային բէֆօրմի կողմնակիցները Հիւսիսային Ամերիկայում:

Նրանք կուռում են յանուն բանւոր դասակարգի մերձաւոր նպատակների և շահերի իրագործման, բայց նրանք պաշտպանում են ներկայ շարժման մէջ միաժամանակ և շարժման ապագան: Ֆրանսիայում կոմունիստներն յարում են սօցիալիստական-դեմօկրատական կուսակցութեանը⁹⁾

⁹⁾ Այն ժամանակ Ֆրանսիայում իրեն սօցիալիստական-դեմօկրատական անանող կուսակցութիւնը նարկայացած էր քաղաքականութեան մէջ Լեդրիւ-Յօլէնի և գրականութեան մէջ Լուի Բլունի միջոցով. ուրեմն նա իրկնքի նման հետու էր այժմեան գերմանական սօցիալդեմօկրատիայից:

Գինն է 25 կոպ.